

ՀԻՄՆԱԿՆԵՐ ԵՐԱՊՈՐՏԸ ԲԱՆՊԱՅԻՆԱԿԱԼԵԹԻՑ ԶԵՏՈՒ

ԿՐՈՒԳԼՅԱԿՈՎ Ի. ՅԱ.

ՍԵԼԵՍԿԵՐԻԴԻ Գ. Գ.

ՄԻՇԱՐԵՎ Ա. Տ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
«ՇՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»

ԵՐԱՊՈՐՏ 1932 թ.

633.7

4-89

633 ԵՐԵՎԱՆԻ Գ. Պ. ԱՆՆՈՒՆԻ Գ. Փ. ՄԻՇԱՐԻՆԻ Ա. Ս. 443

24 SEP 2010

ԾԽԱԽՈՏԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻՑ ՀԵՏՈ

ИНИСТИТУТЪ
ВОСТОКОВЕДЕНІИ
Академія наук СССР
ԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

«Բերքահավաքման ամբողջ աշխատանքի մեջ կարևորագույն տեղ պետք է բռնի պայքարը կորուսանների դիմ»:
(ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀԿ (բ) Կ Կենտկոմի 1932 թ. հուլիսի 5-ի վորոշումից՝ այս տարվա բերքահավաքման կամպանիայի մասին):

Պետական ծխախոտագործական արդյունաբերության և արտահանման շահերը,—

Հնդհանրապետ կոլտնտեսությունների և մասնավորապես ծխախոտագործական կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման խնդիրը,—

ԽՍՀՄ գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի արտադրական ուժերի աճման ապահովումը,—

— Այս բոլորը պահանջում է, վոր ծխախոտագործական կոլտնտեսությունները և ծխախոտագործությանը զբաղվող անհատական չքավոր-միջակ տնտեսությունները ամբողջովին, առանց կորուսանների և հաջողությամբ հավաքեն ծխախոտի 1932 թվականի բերքը:

Ծխախոտի բերքը զաշտից ամբողջովին հավաքելով գործը չի վերջանում: Հետագա աշխատանքները,— շարելը, չորացնելը, պահպանելը և այլ աշխատանքներ բավական մեծ տեղ են բռնում, տալիս են ծխախոտի այն պատրաստի հումույթը, վորն անհրաժեշտ է մեր սոցիալիստական արդյունաբերությանը:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀԿ (բ) Կ Կենտկոմի 1932 թվի հուլիսի 5-ի վորոշումը «1932 թվականի բերքահավաքման կամպանիայի մասին» ամբողջ ծխախոտագործական հասարակայնության առաջ ամբողջ պարզությամբ դնում է այն հիմնական խնդիրները, վորոնք ամբողջովին պիտի իրագործվեն ծխախոտի բերքահավաքից հետո նրա մշակման ժամանակաշրջանում (խոնավացումը, տեսակավորումը, փունջ և հակ կապելը): Ահա այդ խնդիրները:

Հայրենի ծավալել պայքարը ծխախոտի թե քանակական և թե վորակական կորստների դեմ:

Հնարավորին չափ, բայց խոհեմաբար կրճատել ծխախոտի մշակման ժամկետերը:

Ճիշտ կազմակերպել աշխատանքը:

Ամբողջովին կենսագործել ծխախոտի մշակման ուսցլոնալացման բոլոր ոգտակար առաջարկները:

Խոտորեն հաշվի առնել և պահպանել մշակվող հումուլթը:

Ամբողջովին կատարել բոլոր ագրո-տեխնիկական կանոններն և ստանդարտի պահանջները:

— Ահա այն հիմնական խնդիրները, վոր պետք է իրագործեն ծխախոտագործական կոլտնտեսությունները 1932 թվականի ծխախոտի բերքի մշակման ընթացքում:

Ծխախոտագործական կոլտնտեսությունների գործունեությունից հաջողության տեսակետից բացառիկ նշանակություն ունեն նյութական շահագուգումության միջոցառումները: Այդ շահագուգումությունը պետք է վերաբերի յուրաքանչյուր ծխախոտագործական — ապրանքային ֆերմային, ծխախոտագործական բրիգադներին և առանձին կոլտնտեսականներին:

Կոլտնտեսականին հասնելիք աշխուրների համար իր ժամանակին և ճշտությունը նրան տալ դրամական կամ բնամթերքային կանխավճարները, աշխատանքը գնահատել վոչ միայն ըստ քանակի, այլ և ըստ վորակի, — ահա թե վորոնք են այն խթանները, վորոնք պիտի բարձրացնեն ամեն մի կոլտնտեսականի նյութավան շահագուգումությունը, ինչպես նաև աշխատանքի արտադրողականությունը:

Այս տարի բավականաչափ նպաստավոր պայմաններ կան ծխախոտագործական կոլտնտեսություններում ծխախոտի բերքն իր ժամանակին և լավ մշակելու համար: Հարկավոր է միայն հմուտությունը, ճիշտ և ժամանակին ոգտագործել այդ նպաստավոր պայմանները՝ ամբողջ աշխատանքը հաջող կատարելու համար:

Այս գրքուլիկի նպատակն է՝ պատմել ծխախոտագործ — կոլտնտեսականներին, բրիգադներին, ծխախոտա-ապրանքային ֆերմաների վորիչներին, ագրո-տեխնիկական և այլ բոլոր աշխատավորներին, վորոնք անմիջականորեն դաշտերում գրադվում են ծխախոտի գործով, — թե ինչպես կարելի յե տեսնիկապես և կազմակերպչորեն ճիշտ կատարել ծխախոտի բերքի մշակման աշխատանքները:

ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

«Յերկրկոտի պլենումը այս տարվա բերքահավաքման կամպանիայի կենտրոնական խնդիրն է համարում պայքարը կորուստների դեմ, — ինչպես ամբողջ բերքի լրիվ հավաքման, այնպես էլ հավաքված գյուղատնտեսական արտադրանքի բարձր վորակի պահպանման տեսակետից: Յուրաքանչյուր կոլտնտեսականի, ծխախոտա-ապրանքային ֆերմայի և խորհրտեսությունների յուրաքանչյուր բանվորի պատվի խնդիր պիտի դառնա այդ գործի իրականացումը»:

ՀԱ (բ) և Հյուսիսային կովկասի Յերկրկոտի 2-րդ պրիմուսի վորոտուլից):

ա) ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԻՉՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Դաշտից հավաքած ծխախոտի հումուլթի պահպանությունը, մանավանդ նրա վորակի պահպանությունը վճռական նշանակություն ունի ծխախոտի բերքի մշակման ժամանակաշրջանում: Ինչպես վորոպճեստև միայն այդ յերկու պայմաններով կարող է տնտեսական անհրաժեշտ արդյունք տալ այս հիմնական աշխատանքը, վոր թափվում է ծխախոտի վրա:

Յուրաքանչյուր վորձված ծխախոտագործ շատ լավ գիտե, վոր շատ անգամ հիանալի վորակ ունեցող հումուլթը, վոր հավաքվում է ու չորացվում, վատ պահվելուց և անվուլթ մըշակվելուց կարող է համարյա ամբողջովին կորցնել իր արժեքը: Ընդհանրապես, ծխախոտի ճիշտ մշակումը, յերբ պահպանվում են բոլոր անհրաժեշտ կանոնները, բավականաչափ բարձրացնում է նրա արժեքը և այդպիսով ապարդյուն չեն կորչում ծխախոտի վրա արված բոլոր ծախսերը:



60410-67

Այս ուղղութեամբ շատ որինակներ կարելի չե հիշել անցյալ տարիներէից: Այսպէս, որինակ, Իլինսկայա գյուղի «Հառաջ, դեպի կոմունիզմ» կոլտնտեսութեան մեջ, ծխախոտի պահպանութեան վատ կազմակերպելու պատճառով նրա կապոցները ցրված էին կոլտնտեսականների տներում: Ծխախոտի անփութ մշակման հետևանքով մի քանի հազար ուղբու կորուստ յեղավ:

Բելորեչինի Մայիսի 1-ի անվան կոլտնտեսութեանը կոլտնտեսականների տանը ծխախոտը անփութ պահելու շնորհիվ կորցրեց ավելի քան 50 հազար շարան: Նույնը պետք է ասել նաև Սորմսկայա գյուղի Հունվարի 9-ի անվան կոլտնտեսութեան մասին:

Այսպիսի փաստերը շատ են և յեթե մենք բոլորը թվենք, մի քանի եջեր կբռնեն:

Այս փաստերը մի ավելորդ անգամ ևս ապացուցում են այն անվիճելի և վաղուց բոլորին հայտնի դրութունը, վոր գործին ժամանակին և լավ նախապատրաստվելը ապահովում է հաջողութունը և, ընդհակառակը, գործը մոռացութեան տալը, իր ժամանակին նախապատրաստական միջոցառումներ չկիրառելը մեծ մասամբ կորստաբեր հետևանք է ունենում:

Մա առանձնապէս կարևոր է ծխախոտի հումուլթի վերաբերմամբ, վորի հաշվառքը, պահպանումն ու մշակումը ամենամեծ ճշտապահութուն և անպայման լիակատար նախապատրաստութուն է պահանջում:

Ծխախոտի մշակման և կանոնավոր պահպանման գործում անհրաժեշտ է գորահավաքել կոլտնտեսային մասսաների ուշադրութունը: Պետք է նաև այդ մասսաներին ամենալայն շափով ներգրավել կորուստների դեմ մղվող պայքարը, նրանց մեջ առաջ բերել հոգատար վերաբերմունք դեպի ծխախոտը: Հակառակ դեպքում, յերբ բացակայում է հասարակական վերահսկողութունն այս աշխատանքի վրա, կոլտնտեսութունն ահագին վնասներ է կրում ծխախոտի վորակի, նաև քանակի կորստից:

Գործնականում ահա թե ինչպիսի յերևույթներ են տեղի ունենում, վորոնք հաստատում են մեր ասածը.—

Սովորաբար ծխախոտը պահվում է չորանոց-մարագնեքում: Կապոցները փոխադրելիս (վոր հաճախ լինում է մեծ տարածութունների վրա), աշխատողների անփութութեան պատճառով ծխախոտը թափթփվում է, վորովհետև կապոցների ծայրերն ուղղակի քարչ են գալիս դեմնի վրա:

Հակ կապելու տեղերում հատակի վրա թափված են լինում ծխախոտի տերևներ և մարզիկ կեղտոտ վտանամաններով ման են գալիս նրանց վրա և այլն: Այս բոլոր «մանր» բաների շնորհիվ կորչում է ծխախոտի վորակն ու քանակը և, ինչպէս շեշտեցինք, բազմահազար վնասներ են հասնում կոլտնտեսութուններին:

Այստեղից բղխում է այն, թե ծխախոտի մշակման հաջող նախապատրաստութեան, հետևապէս կորուստների դեմ պայքարելու տեսակետից ինչ վճռական նշանակութուն ունի յուրաքանչյուր կոլտնտեսութեան, յուրաքանչյուր առանձին արտադրական բրիգադի և սրա առանձին խմբակների պատրաստութունը: Այս միջոցառումների թերագնահատումը, ինչպէս նաև ծխախոտի մշակման դժվարութեան ու բարդութեան թերագնահատումը, վոչ բավականաչափ կոնկրետ, մանրամասնորեն մտածված պլանների բացակայութունն անպայման կբարդացնեն և կձգձգեն ծխախոտի մշակումը, իսկ սրանից կորուստներ կլինեն:

Սակայն բավական չե գրել այս բոլոր միջոցառումների մասին, առաջ սրկել այս միջոցառումները ամենապլլսավորը— հարկավոր է նրանց շուրջը ծավալել մասսայական լայն կամպանիա, աշխատել, վոր կոլտնտեսականները լիապէս դիտակցեն, յուրացնեն նրանց նշանակութունը: Այս հիմունքով, ինչպէս և շահագրգռման ճանապարհով, գորահավաքել կոլտնտեսականներին՝ պայքարելու բարձր թափերի, աշխատանքի լավագույն վորակի, կորստների վերացման համար, հումուլթի մշակման ամենակարճ ժամկետերի, ծխախոտը ժամանակին մթերակայաններին հանձնելու համար:

Անհրաժեշտ է նաև հիշել, վոր ծխախոտի արդունաբերութունը ծխախոտի հումուլթի խիստ մեծ կարիք ունի և վոր արտածվելիք ծխախոտի հումուլթը հանձնելու համար հաստատուն ժամկետեր են սահմանված:

Ինքնահոսի, «մի գուցե»-ի վրա հույս դնելու դեմ պետք ամենախիստ պայքար մղել կոլտնտեսութուններում: Հնգամյակի 4-րդ, ավարտական տարում այսպիսի արամադրութունները չեն կարող տեղ ունենալ և նրանք ձեռնաուլ յեն միայն մեր դասակարգային թշնամուն:

Ծխախոտի հումուլթը մշակելու և հանձնելու գործում նախապատրաստվելու համար մենք առաջարկում ենք հետևյալ կոնկրետ միջոցները.

1) Կատարել գոյութուն ունեցող, չորացրած ծխախոտի

ամենաճիշտ հաշվառք ըստ շարանների քանակութեան և ըստ տերևահատի:

2) Ծխախոտի մշակման պլանը կազմել հանձնելուն վերաբերող առաջադրութիւններին համապատասխան:

3) Մշակման պլանի հիման վրա հատկացնել համապատասխան քանակութեամբ բանվորական ույժ:

4) Ծխախոտի մշակման համար սլատրաստել անհրաժեշտ շենքեր և սրանք կա հափորել ինչպէս հարկն է (լուսավորութիւն, սաքութիւն, ջուր և այլն):

5) Կոլտնտեսականների արտադրական խորհրդակցութեան մեջ քննարկել թե արտահանման և թե արդյունաբերական ստանդարտները, արտադրանքի չափերը, սրանց գնահատութիւնը (հաշի առնելով ԽՍՀՄ հողօգործման վերջին վորտշումը այդ չափերը բարձրացնելու մասին), ինչպէս նայե հու մուլթի մշակման և հանձնման պլանը:

6) Իրիգադնների աշխատանքի վայրերում կազմակերպել հասարակական սնունդ և անհրաժեշտ թփով մանկամսուրներ և մանկահրապարակներ:

7) Իրիգադներն վաղորդ տալ անհրաժեշտ ինվենտար:

8) Կազմակերպել ծխախոտի մշակումով զբաղված կոլտնտեսականների կուլտուր-մասսայական սպաւարքումը (պատի յրագիր, յրագրերի ընթերցում, կինո և այլն):

9) Կոլտնտեսականների մեջ ծավալել սոցիալիստական մրցում պարզեւտրում աշխատանքի քանակին ու վորակին ամենաբարձր ցուցանիշների համար (այսինքն պարտներ տալ սրանց, ովքեր շատ և լավ են աշխատել):

ՉՈՐԱՅՐԱԾ ԾԽԱԽՈՏԻ ՇԱՐԱՆՆԵՐԻ ՈՒ ԿՍՊՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՔԸ

Անցյալ տարիներում կոլտնտեսութիւնների գործնական աշխատանքը ցույց տվեց, վոր չորացրած ծխախոտի հաշվառքին սնանկամասն անբավարար ուշատրութիւն է դարձվում: Յեղել են միայն առանձին գրանցումներ այս կամ այն բրիգադների կողմից: Ըստ տերևահատի հաշվառք համարյա վոչ մի տեղ չի կատարվել: Հաշվառքն սկսվում էր միայն ծխախոտը հակ կապելու և հանձնելու մունքներից, այսինքն այն ժամանակ, յերբ կոլտնտեսութիւնը փաստաթուղթ էր ստանում ծխախոտը մթերողին հանձնելու մասին: Չորանոցներից դուրս բերվող և պահվող ծխախոտն ամբողջովին դիմազրկվում էր (այսինքն վոչ վոք պատասխանատու չէր նրա պահ-

պանման համար), մարագներում կախվում էր առանց վորովե կարգի: Նույնիսկ կոլտնտեսականները, վորոնք պատասխանատու էին ծխախոտի համար (իսկ պատասխանատու մարդիկ հաճախ չէին լինում), չգիտեին, թե մարագում ինչքան ծխախոտ կա: Եւ չխոսենք առանձին տերևահատի վորակի և չափի մասին:

Այս բոլորը նպաստավոր պայմաններ էր ստեղծում գեղծումների համար, ամբողջովին բացակայում էր պատասխանատվութիւնը ծխախոտի հումուլթի պահպանութեան և վորակի հանդէպ: Ամենազխափորն այն է, վոր շնորհիվ այդպիսի անտնտեսավարութեան, կուլակն իր գործակալների միջոցով ուտագործում էր կոլտնտեսականների ամենաանգիտակից մասը և դրդում էր նրան՝ գողանալու ծխախոտը կոլտնտեսութեան մարագից: Յեւ, վորովհետև հաշվառքը կարգավորված չէր, այդ պատճառով ծխախոտի հափշտակիչներն անպատիժ էին մնում իսկ կոլտնտեսութիւնն զգալի փնամներ էր կրում: Միևնույն ժամանակ նպաստավոր դրութիւն էր ստեղծվում ծխախոտի մաքանենդութեան, գաղտնի վաճառման համար:

Հաշի առնելով անցյալ տարիների այս բոլոր սխալները, անհրաժեշտ է ամենազաժան պայքար մղել հումուլթի կորուստների դեմ, սահմանել ծխախոտի հումուլթի ամենաճշգրիտ հաշվառք: Հարկավոր է կոլտնտեսային մասսաներին գորահավաքել այդ հարցերի շուրջը և ջախջախել ծխախոտի գողտնի վաճառքի յերևուլթները:

Հաշվառքի գործը պետք է կազմակերպել մտավորապես այսպես.—

1. Ամբողջ չորացրած ծխախոտը պետք է անպայման ճրգրիտ հաշվառքի յենթարկվի և գրանցվի հատուկ մատյաններում (գրքերում): Մատյանները պետք է տրվեն այն մարդկանց, վորոնք պատասխանատու յեն յուրաքանչյուր առանձին շենքում ծխախոտի պահպանութեան համար:

2. Հաշվառքի պիտի յենթարկել վոչ միայն ծխախոտի ամբողջ բերքը, այլ և առանձին տերևահատերը:

3. Ծխախոտը պահելու համար ընդունելիս, ինչպէս և բաց թողնելիս անպայման պետք է ստորագրել մատյանում:

4. Կոլտնտեսութեան հաշվետարը պարտավոր է մանրամասն հրահանգներ տալ այն բոլոր մարդկանց, վորոնք պատասխանատու յեն ծխախոտի համար, — թե մատյանում ինչպէս պիտի գրանցվի ծխախոտի յերքն ու մուտքը և ինչպէս պիտի ծխախոտն ընդունվի կամ բաց թողնվի:

5. Ժխախտտի հումուլթի հաշվապահական հաշվառքը պետք է սկսվի շարանները չորանոցից դուրս տանելու և մարագնեքում տեղավորելու մոմենտներից:

6. Կոլտնտեսուլթյան հաշվետարը վաղորոք պետք է մշակել հաշվառքի ամբողջ կարգը և հանձնել բրիգադներին՝ ի կատար ածելու համար:

Ծխախտտի հաշվառքը պիտի կազմակերպել այնպես, վորպեսզի սոցիալիստական բերքի վոչ մի տերև չկորչի, վոչ մի վնաս չհասնի կոլտնտեսուլթյուններին ու պետուլթիան: Անխնա պալքար պիտի հայտարարել կոլտնտեսային գուլթի բոլոր հափշտակիչներին, բոլոր մաքսանենգներին:

Կոլտնտեսային գուլթի պահպանուլթյան վերաբերյալ մեր կառավարուլթյունն որենք է հրատարակել, վորի համաձայն այդ գուլթի հափշտակիչները պատժվում են մինչև սոցիալական պաշտպանուլթյան բարձրագույն չափը—գնդակահարուլթյուն: Հարկավոր է այդ որենքը լայն չափով պարզաբանել բոլոր կոլտնտեսականներին և աշխատել, վոր նրանց համար միանգամայն պարզ ու հասկանալի լինի որենքի դասակարգային եյուլթյունը:

գ) ԾԽԱԽՈՏԻ ԿԱՊՈՅՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չորանոցից (արհեստական կամ արևի տակ) դուրս տարվող և պահպանուլթյան համար մարագները լցվող ծխախտոր պետք է վերջնականապես և լավ չորացվի: Խոնավ, կիսաչորացած ծխախտոր չպիտի ընդունվի մարագներում և հարկավոր է իսկույն և յեթ միջոցներ ձեռք առնել նրա լիակատար չորացման համար: Չորացնել պետք է կամ արհեստական (տաքացվող շենքերում) յեղանակով, կամ արևի տակ: Մարագներում պահելու համար կարելի յե ընդունել այնպիսի ծխախտ, վորն ունի հետևյալ նշանները. տերևի միջին մասը պետք է կտոր-կտոր լինի այնպես, ինչպես և նրա մյուս մասերը և ապակու կամ ծծան թղթի վրա չպետք է թողնի խոնավուլթյան հետքեր:

Վորովհետև շատ կոլտնտեսուլթյուններում չկան հատուկ շենքեր ֆերմենտացիայի չյենթարկված ծխախտտի պահպանուլթյան համար, և ծխախտոր մինչև հակ կապելը պահվում է ուրիշ շենքերում, ուստի անհրաժեշտ է, վորպիսոցի այդ շենքերը համապատասխանեն հետևյալ հիմնական պայմաններին վորոնք ապահովում են ծխախտտի վորակի պահպանուլթյունը—

1) Ծենքը պիտի լինի անպայման մաքուր և, վոր գլխավորն է, առանց սուր հոտերի: Այնպիսի շենքեր, ինչպիսին են, որինակի համար, ախոռը, անասնազոմը, հավանոցը և այլն, ծխախտտի պահպանուլթյան համար բոլորովին անպետք են:

2) Ծենքն անպայման պիտի ունենա առաստաղ,—յեթե կտուրը յերկաթից է կամ կղմինդրից, վորովհետև հակառակ դեպքում այդպիսի շենքերում, նայած յեղանակին, ծխախտոր կամ պետք չափից շատ չորանա, կամ խոնավանա, մի յերևուլթ, վորն այնպայման բացասաբար կաղրադառնա նրա վորակի վրա: Հասկանալի յե, վոր ավելի լավ է ծխախտոր պահել առաստաղ և փայտե հատակ ունեցող շենքում, իսկյեթե չկան այդպիսի հարմար շենքեր, ծխախտոր կարելի յե պահել ուրիշ շենքերում, վորոնք ծածկված են տաշեղներով, ետերնիտով, ծղոտով, յեղեգնով և այլն:

Ծխախտտն արտաքին մթնոլորտային ազդեցուլթյուններից (չափից դուրս չորուլթյուն կամ խոնավուլթյուն) պահպանելու համար նրակապոցները չպետք է նոսր կախվեն շենքերում:

Խոնավ յեղանակին ծխախտտի շենքը պետք է պինդ ծածկված լինի, իսկ լավ չոր յեղանակին շենքում անպայման պետք է ողափոխուլթյուն կատարել:

Ծխախտտի պահպանուլթյան գործում գիմազրկուլթյունն ու անպատասխանատուլթյունը վերացնելու նպատակով (վորոնք մինչև այժմ տեղ ունեն կոլտնտեսուլթյուններում), ինչպես նաև ծխախտտի հափշտակուլթյունները կանխելու համար, ծխախտտա-ապրանքային ֆերմաների վարիչներն ու բրիգադիրները (այնտեղ, վորտեղ ծխախտոր պահպանվում է առանձին բրիգադներում) պետք է ընտրեն հատուկ մարդկանց՝ վորոնք անհատապես պետք է պատասխանատու լինեն ծխախտտի վորակի և քանակի համար:

ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐ ԾԽԱԽՈՏԸ ՀՐԴԵԼԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կոլտնտեսուլթյուններում ծխախտոր հրդեհներից պաշտպանելու գործը վատ հիմքերի վրա յե դրված յեղել, իսկ շատ կոլտնտեսուլթյուններում վոչ մի ուշադրուլթյուն չի դարձվել այդ գործի վրա:

Հետևանքն այն յեղավ, վոր անցյալ տարի մենք ահագին կորսանք ունեցանք,—ծխախտտով լցված մարագները վոչնչացան հրդեհից: Այսպես որինակ, Մերջանակի գյուղում այրվ' ց

յերեք մարագ և ծխախոտի 50 հազար շարան, վորոնք դտնվում էյին այդ մարագներում: Տեղի ունեցան նաև ուրիշ այդպիսի դեպքեր, թեև ավելի քիչ կորստով, բայց և այնպես, դարձյալ կոլեկտիվ տնտեսութուններն անազին վնասներ կրեցին: Վոչ մի բուսե չպիտի մոռանալ, վոր շարգված կուլակը չի վոչնչանում առանց դիմադրելու: Դասակարգային թշնամին ձգնում է վնասներ հասցնել կոլեկտիվ տնտեսության և դրանով արգելել նրա զարգացումը:

Հրդեհումները, հափշտակութունները և այլն,—նրա վնասարական աշխատանքի ձևերն են: Ահա թե ինչու հարկավոր է թե հրդեհներից պաշտպանվելու միջոցներ ձեռնարկել և թե այդ հարցի շուրջը զորահավաքել կոլտնտեսականների ուշադրութունը: Հարկավոր է նրանց բացատրել կոլտնտեսային գույքն աչալըջությամբ պահպանելու անհրաժեշտությունը:

Մենք կառավարվենք հետևյալ գործնական միջոցառումները.—

- 1) Յուրաքանչյուր խորհանտեսութուն և կոլտնտեսութուն պետք է կազմակերպի ծխախոտի հսկողութուն թե գիշերը և թե ցերեկը: Ծխախոտին հսկելու համար պետք է նշանակել այն կոլտնտեսականներին, վորոնք առանձնապես ստուգված են:
- 2) Յուրաքանչյուր մարագ, վորտեղ պահվում է ծխախոտը, պետք է ունենա հրդեհաշեջ պոմպեր, ջրով լի տակաոներ, դուլեր և այլ անհրաժեշտ պարագաներ:
- 3) Մարագների մոտ արգելել խարույկներ վառելն ու ծխելը: Հրդեհից պաշտպանվելու կանոնները խախտվելիս տուգված նշանակել:
- 4) Յուրաքանչյուր բրիգադի կազմից կազմակերպել հրդեհաշեջ խումբ, նշանակելով պատասխանատու անձանց, վորոնք պետք է հրահանգներ տան այդ խմբերին, կազմակերպեն պայքարը հրդեհների դեմ և ձեռք առնեն նախազգուշության բոլոր միջոցները:

ԾԽԱԽՈՏԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՆՐԱ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻՑ ՇԵՏՈ

Արևի տակ կամ արհեստական չորանոցներում ծխախոտը հավաքվում է վագոններից, շրջանակներից, բողոններից և այլ չորանոցային կառուցումներից, կապվում է և, ինչպես ասացինք նախորդ դիտում, այդ դրությամբ կախվում է չորանոց-մարագում, կամ մի ուրիշ հարմար շենքում: Այստեղ ծախ

խոտի կապոցները պահվում են մինչև հերթական աշխատանքը (տեսակավորումը, փնջակապը, հակ կապելն ու հանձնումը): Նախ քան այդ գործողություններին անցնելը (վորոնցով վերջանում են ծխախոտի աշխատանքները կոլտնտեսության մեջ), հարկավոր է կանգ առնել ծխախոտի կապոցները պահպանելու և խնամելու հարցերի վրա:

Առաջին յեվ հիմնական կանոնն այն է, վոր շենքերում շարանները պետք է կապվեն և կախվեն այն ժամանակ, յերբ ծխախոտը լավ չորացել է:

Յեկուրդ կանոն—ծխախոտի կապոցները պետք է պահպանել դրաի ազդեցութուններից լավ պաշտպանված շենքերում: Ավելի լավ է, վոր կապոցները խիտ կախվեն:

Կոլտնտեսութուններում միշտ չեն պահպանվում այս հասարակ կանոնները: Հետևանքը—բարձր հատկության բոլոր նշաններն ունեցող ծխախոտը կիսով չափ կորցնում է իր արժեքավորությունը, վորովհետև տերևների վորոշ մասը (յերակները, ցողունը) լավ չեն չորացած, կամ յեթե բավականաչափ չորացել են, ծխախոտը տեղավորվել է անհարմար, մթնոլորտային ազդեցութուններին յենթակա շենքում, յենթարկվել է մառախուղի ու խոնավության շացասական ազդեցության և այլն: Յեվ, փոխանակ ստանալու սպասվելիք բարձր տեսակները, կոլտնտեսութունը մշակման ժամանակաշրջանում ստանում է ցածր տեսակներ:

Ահա թե ինչու ծխախոտի վորակի կորուստների դեմ պայքարելու համար կոլտնտեսութունները հատուկ ուշադրութուն պիտի դարձնեն չորացրած ծխախոտի պահպանության վրա:

Նախորդ դիտում մանրամասն նկարագրված են ծխախոտի կապոցները պահպանելու ձևերը և շեշտված է, թե դրա համար ինչ տեսակ շենքեր են հարկավոր: Մատնանշենք նաև, վոր հիմնական արժեքավոր տերևները,—անաչր, նախավերին և վերին մասերը պետք է կախվեն մարագի ամենահարմար տեղերում, վորովհետև սրանց մշակումն ավելի ուշ է կատարվում, սովորաբար աշնան-ձմեռային ժամանակաշրջանում, յերբ մեր յերկրամասում չափից դուրս խոնավութուն և մառախուղեր են լինում:

Այս նախնական դիտողութուններից հետո անյնեք չոր ծխախոտի մշակման հարցերին: Չոր ծխախոտի հիմնական աշխատանքը տեսակավորումն է և հակ կապելը: Նախապես տեսակավորված ծխախոտը հետագայում, նայած ուայոնին և ծխա

խոտի վորակին, մշակվում է գանազան ձևերով: Մեր Հյուսիսային Կովկասում գլխավորապես կիրառվում են մշակման հետևյալ ձևերը.—

- 1) Փունջ կապելը,
- 2) Շարաններով մշակելը,
- 3) Հարգարման ձևով մշակելը,
- 4) Շարաններից ծխախոտը հանելը:

Այնուհետև փունջից կամ շարաններից կապվում են հակեր և դրանով վերջանում է ծխախոտի վրա կատարվող աշխատանքը կոլտնտեսություններում ու խորհանտեսություններում: Ավելի մանրամասն կանգ առնենք այդ աշխատանքներից յուրաքանչյուրի վրա.—

Տեսակալորում: Տեսակալորելուց առաջ ծխախոտի շարանները խոնավացվում են, վորսկեզի հեշտ լինի ծխախոտի տերևների վրա աշխատել—ուղղել սրանց, հարդարել, փունջ կապել և այլն: Չափից դուրս չոր ծխախոտը չպետք է մշակել, վորովհետև փշրվում է, տերևները ջարդվում են, վորով մեծ կորուստ է լինում: Չոր ծխախոտը խոնավացնելու ամենալավ յեղանակն այն է, վոր կապոցները կամ շարանները տեսակալորելուց և հակ կապելուց մեկ օր առաջ պետք է տանել հատուկ նկուղներ, յեթե սրանք կան կոլտնտեսության մեջ: Վերջին ժամանակներս ծխախոտը խոնավացնելու համար սկսել են գործադրել շոգին (Լակերբայի յեղանակը):

խոնավացած ծխախոտն այս կամ այն յեղանակով տեսակալորվում է, այսինքն բաժանվում է առանձին տեսակների: Թեև կան բազմաթիվ նշաններ, վորոնցով կարելի յե վորոշել, թե վոր տեսակին է պատկանում այս կամ այն տերևը, այնուամենայնիվ պետք է ասել, վոր մինչև այսօր այդ նշանները յոկ պայմանական են և չունեն մի վորևե կայուն, դիտական հիմք: Առայժմ ծխախոտի տեսակը վորոշվում է գործնական աշխատանքում:

Ծխախոտի տեսակը վորոշող նշանները սուբեկտիվ կարգի յեն, գտնվում են դիտելու և շոշափելու միջոցով: Ստորև մենք բերում ենք այն հիմնական տարրերը, վորոնք հիշվում են ստանդարտներում և վորոնց պետք է ինկատի ունենալ ծխախոտը տեսակալորելիս, այս կամ այն տեսակը վորոշելու համար: Այդ նշանները հետևյալներն են.—

- 1) Տերևահատ.
- 2) Հասունություն.
- 3) Գույն.

4) Մեխանիկական վնասվածքներ.

5) Վնասվածքներ հիվանդություններից ու վնասատուներից.

6) Տերևների պնդություն.

7) Հողով կամ ավազով կեղտոտվելը:

Ինչպես անցյալ, այնպես էլ այս տարի մեր յերկրամասի ծխախոտերի համար սահմանվում է յերկու ստանդարտ,—մեկն այսպես կոչված՝ ՈՍՏ—5113, անցյալ տարի զոյություն ունեցած ՈՍՏ—3044-ի փոխարեն—արտահանման ռայոնների բարձրարժեք ծխախոտի համար, մյուսը—ՈՍՏ—5112—անցյալ տարվա ՈՍՏ—3045-ի փոխարեն, մյուս, այսպես կոչված՝ արդյունաբերական ռայոնների համար:

Հյուսիսային Կովկասում աճող ծխախոտի տեսակների քանակությունը և այդ տեսակները վորոշելն այսպես է տրված վերոհիշյալ ստանդարտներում.—

ԱՐՏԱՀԱՆՍԱՆ ԱՍԱՆԴԱՐՏ (ՈՍՏ—5113)

ա) ԾԽԱՆՈՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ (Սամսոն)

1) Առաջին տեսակին են պատկանում թորուկ, թորուկալթի, անաչ և յենթա-անաչ տերևները—հասունացած և պինդ, նարնջագույնից մինչև կարմիր գույնի: Թույլատրելի յեն չնչին մեխանիկական վնասվածքներ, վորոնք չեն անդրադառնում տերևի ընդհանուր հասունության վրա: Հիվանդություններից ու վնասատուներից յեղած վնասվածքները թույլատրելի չեն, բացի տերևի մի կողմից, նրա գլխավոր յերակի յերկարությամբ չնչին վնասվածքից, վոր կոչվում է «փասս»:

2) Յերկրորդ տեսակին պատկանում են թորուկ, թորուկալթի, անաչ և յենթա-անաչ տերևները—հասունացած, նարնջագույնից մինչև կարմիր գույնի, տերևի գլխավոր յերակի յերկարությամբ մի փոքր բաց-կանաչ յերանգով:

Թույլատրելի յեն չնչին մեխանիկական վնասվածքներ, վորոնք չեն անդրադառնում տերևի ընդհանուր հասունության վրա:

Հիվանդութուններից ու վնասատուներից վնասվածքներ չեն թույլատրվում, բացի տերևի գլխավոր յերակի յերկարությամբ չնչին փասսից:

3) Յերրորդ տեսակին են պատկանում թորուկ, թորուկալթի, անաչ յենթա-անաչ և խաշլամա կոչված տերևները,—

բավականաչափ չհասունացած կամ մի քիչ չափից դուրս հասունացած, գեղին գույնից մինչև կարմիր գույնի, ամբողջ տերևի վրա պարզ-կանաչավուն յերանգավորումով:

Թուլլատրելի յեն վնասավածներ տերևի ծայրերին, նրա մակերևույթի մեկ հինգերորդ մասից վոչ ավելի, ինչպես նաև տերևի մի կամ յերկու կողմում փասսից չնչին վնասվածք և չոր մանտար կոչված հիվանդությամբ տերևներ: Յերրորդ տեսակի յուրաքանչյուր հակի մեջ հիշյալ վնասվածքներով (մեխանիկական կամ վնասատուների) տերևների քանակությունը քիչ պիտի լինի:

4) Չորրորդ տեսակին են պատկանում բոլոր տերևները, վորոնք լրիվ չեն հասունացած, կամ չափից դուրս են հասունացած, զանազան գույնի յեն, —նաև կինամոնի գույնի, մուխ կանաչավուն յերանգով, դիպ կոչված տերևները —միայն պարզ կանաչավուն յերանգով:

Թուլլատրելի յեն հետևյալ մեխանիկական վնասվածքները՝ վոչ ավելի, քան տերևի կեսի չափ, մի կողմից կամ յերկու կողմից փասս, վորը չպիտի ծածկե տերևի ամբողջ մակերևույթը, մոզախկա և չեչոտություն կոչված հիվանդություններից վնասված տեղերը — վոչ ավելի, քան տերևի մեկ յերրորդ մասը, թուլլատրելի յեն նաև չոր-մանտար տերևներ: Հիշյալ վնասվածքներն ունեցող տերևները չորրորդ տեսակի յուրաքանչյուր հակի մեջ պիտի լինեն չնչին քանակությամբ:

Բ) ԹԻԿԿՈՒԼԱԿ ԿՈՒՖԱՆՅԱՆ ՏՐԱՊԻՉՈՆ ԾՆԱԽՈՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1) Առաջին տեսակին են պատկանում թորուկ, թորուկաչիթի, անաչ և յենթա-անաչ տերևները, վորոնք պիտի լինեն հասունացած, ամուր, պարզ-գեղին գույնից մինչև նարնջագույն (արհեստականորեն չորացրած ծխախոտեր) և գեղին-նարնջագույնից մինչև կարմիր (բայց վոչ մուլգ-կարմիր գույն (արևի տակ չորացրած ծխախոտեր) տերևի զլխավոր յերակի յերկարությամբ — մի փոքր կանաչավունություն:

Թուլլատրելի յեն չնչին մեխանիկական վնասվածքներ, վորոնք չեն անդրադառնում տերևի ընդհանուր հասունացման վրա:

Հիվանդություններից ու վնասատուներից վնասվածքներ չեն թուլլատրվում, բացի մի կողմում չնչին փասսից (տրիպս): Առաջին տեսակին չեն պատկանում արևի տակ չորաց-

ված տերևները, վորոնք կորցրել են իրենց հիմնական գույնը (սպիտակավուն են):

2) Յերկրորդ տեսակին պատկանում են թորուկ, թորուկաչիթի, անաչ և յենթա-անաչ տերևները, — հասունացած. պարզ-գեղին և նարնջի գույնի (արհեստականորեն չորացրած ծխախոտերը) և գեղին, նարնջագույն ու կարմիր (բայց վոչ մուլգ կարմիր) գույնի (արևի տակ չորացվող ծխախոտերը), տերևի ամբողջ մակերևույթի վրա պարզ-կանաչավուն յերանգով:

Թուլլատրելի յեն փոքր չափով մեխանիկական վնասվածքներ, վորոնք չեն անդրադարձել տերևի ընդհանուր հասունության վրա:

Հիվանդություններից ու վնասատուներից վնասվածքներ թուլլատրելի չեն, բացի չնչին չափով մի կողմի փասսից:

Յերկրորդ տեսակին կարող են պատկանել նաև խաչլամա կոչված տերևները, յեթե միայն հասունացած են և պինդ, մեխանիկորեն կամ վնասատուներից չեն վնասված և կանաչավուն չեն:

Ինչպես առաջին, այնպես ել յերկրորդ տեսակին չեն կարող պատկանել արհեստականորեն չորացրած տերևները, վորոնք կորցրել են իրենց հիմնական գույնը (սպիտակավուն են):

3) Յերրորդ տեսակին պատկանում են թորուկ, թորուկաչիթի, անաչ, յենթա-անաչ և խաչլամա տերևները, վորոնք բավականաչափ չեն հասունացած, կամ մի փոքր ավելի յեն հասունացած, լինում են ամեն գույնի, յերանգավոր ումներով, բացի կարմիր գույնից (արհեստականորեն չորացրած ծխախոտեր). մասամբ արևի տակ և ամբողջովին արևի տակ չորացրած ծխախոտերի վերաբերմամբ թուլլատրելի յեն կարմիր, բայց վոչ մուլգ-կարմիր տերևները, վորոնք ունենում են բաց-կանաչ կամ մուլգ կանաչ, բայց վոչ համատարած յերանգ:

Թուլլատրելի յեն մեխանիկական վնասվածքներ վոչ ավելի, քան տերևի մակերևույթի մեկ հինգերորդի չափով, նրա ծայրերին, ինչպես նաև փասսից վնասվածքներ մի կամ յերկու կողմից և չոր-մանտար տերևներ:

Այդպիսի վնասվածքներ ունեցող տերևները յերրորդ տեսակի ծխախոտի հակերում քիչ քանակով պիտի լինեն:

4) Չորրորդ տեսակին պատկանում են բոլոր տերևները, վորոնք լրիվ չեն հասունացած, կամ չափից դուրս են հասունացած, լինում են ամեն գույնի ու յերանգի, նաև կինամոնագույն, տերևի ամբողջ մակերևույթի վրա մուլգ-կանաչավուն

յերանգով (դիպ կոչված տերևները—միայն պարզ կանաչավուն գույնի):

Մեխանիկական վնասվածքները թուլատրելի չեն վոչ ավելի, քան տերևի կես մասի վրա մի կողմից կամ յերկու կողմից փաստով վնասվածքները—ամբողջ տերևի վրա, բայց վոչ համատարած, մոզայիկայից ու չեչոտությունից յեղած վնասվածքները—վոչ ավելի, քան տերևի մեկ յերրորդ մասի վրա. թուլատրելի չեն նաև չոր-մանտար տերևներ: Այդպիսի վնասվածքներ ունեցող տերևները չնչին քանակով կարող են լինել չորրորդ տեսակի ծխախոտի հակերում:

9) ԾՈՎԱՓՆՅԱ ՏՐՍՊԻՉՈՆ—ՊԼԱՏԱՆԱ ԾԵՍԱՆՈՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1) Առաջին տեսակին պատկանում թորուկ, թորուկ-ալթի, անաչ և յենթա-անաչ տերևները—հասունացած և պինդ, դեղին, նարնջի և կարմիր գույնի:

Թուլատրելի չեն մեխանիկական չնչին վնասվածքներ, վորոնք չեն անդրադառնում տերևի ընդհանուր հասունացման վրա:

Հիվանդություններից ու վնասատուներից վնասվածքներ չեն թուլատրվում, բացի տերևի գլխավոր յերակի յերկարությամբ չնչին չափով միակողմանի փաստից (տրիպ):

2) Յերրորդ տեսակին պատկանում են թորուկ, թորուկալթի, անաչ յենթա-անաչ տերևներ,—հասունացած, դեղին, նարնջի և կարմիր գույնի, տերևի գլխավոր յերակի յերկարությամբ մի փոքր բաց-կանաչ յերանգով:

Թուլատրելի չեն մեխանիկական չնչին վնասվածքներ, վորոնք չեն անդրադարձել տերևի ընդհանուր հասունացման վրա:

Հիվանդություններից և վնասատուներից վնասվածքներ չեն թուլատրվում, բացի տերևի գլխավոր յերակի յերկարությամբ չնչին, միակողմանի փաստից:

3) Յերրորդ տեսակին պատկանում են թորուկ, թորուկալթի, անաչ, յենթա-անաչ և խաշլամա տերևները,—բավականաչափ չհասունացած կամ մի փոքր ավելի հասունացած, դեղին, նարնջի և կարմիր գույնի, տերևի ամբողջ մակերևութի վրա պարզ կանաչավուն յերանգով:

Մեխանիկական վնասվածքներ թուլատրվում են վոչ ավելի, քան տերևի մակերևութի մեկ հինգերորդի չափ ինչ-

պես նաև մի կողմից վնասվածքներ փաստից, յերկու կողմից նույնպիսի չնչին վնասվածքներ և չոր-մանտար տերևներ:

Յերրորդ տեսակի յուրաքանչյուր հակի մեջ վերոհիշյալ վնասվածքներով (մեխանիկական, հիվանդություններից և վրնասատուներից) տերևները պետք է լինեն չնչին քանակությամբ:

4) Չորրորդ տեսակին պատկանում են բոլոր տերևները, վորոնք լրիվ չեն հասունացած, կամ չափից դուրս են հասունացած, լինում են ամեն գույնի ու յերանգի, նաև կինամոնագույն, տերևի ամբողջ մակերևութի վրա մուգ-կանաչ յերանգով: (Դիպ կոչված տերևները—միայն պարզ-կանաչավուն յերանգով):

Մեխանիկական վնասվածքներ թուլատրվում են վոչ ավելի, քան տերևի կես մասի վրա, ինչպես նաև վնասվածքներ մի կողմի փաստով, յերկու կողմի փաստով, բայց վոչ համատարած, թեթև վնասվածքներ չեչոտությունից և կուլից—վոչ ավելի, քան տերևի մեկ յերրորդի չափ. թուլատրելի չեն չոր-մանտար տերևներ:

Չորրորդ տեսակի յուրաքանչյուր հակը կարող է վերոհիշյալ վնասվածքներով (մեխանիկական, հիվանդություններից ու վնասատուներից) տերևներ պարունակել չնչին քանակությամբ:

Բոլոր ծխախոտերի վերաբերյալ (Սամսոն, Տրապիզոն, Տիկկուլակ) պետք է իմանալ, վոր—

1) Բոլոր տեսակների տերևները չպիտի կեղտոտված լինեն հողով և ավազով և մինչև հակ կապելը պիտի մաքրվեն:

3) Տեսակներից և վոչ մեկի մեջ չպետք է լինեն թաց մանտարով տերևներ:

Բացի մեր թված տեսակներից, կան նաև հետևյալները—

Սոտան, վորը պետքական է արտադրության համար: Այս տեսակին են պատկանում բոլոր տերևները, վորոնք ամբողջովին վնասված են փաստ, չեչոտություն և մոզայիկա հիվանդություններից, ինչպես նաև այն տերևները, վորոնք վնասված են կուլ կոչված հիդանդուլթյամբ վոչ ավելի, քան տերևի կեսի չափ, ապա բոլորովին սևացած. ճգմված տերևների կտորները (բայց վոչ Փարմատուրան), դաշտում չորացածները (աշագ), այրվածները (չորանալու ժամանակ), Ֆիլիչները, թաց մանտարով տերևները, վորոնք չեն փտում:

Աշագ կոչվում են ծխախոտի չափից դուրս պատած տերևները, վորոնք չորացել են դաշտում:

6040.67



Ճարմատուրա համարվում են տերևների կտրտանքները, վորոնք լինում են վոչ ավելի, քան 20 քառ սանտիմետր մեծությամբ:

Լինում է նաև արտադրության համար անպետք խոտան, վորին պատկանում են՝ ձևախոտային աղբը, փշրվածքները և վարակված, բորբոսնած, կուլ հիվանդությամբ ավելի քան կիսով չափ վնասված տերևները:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

ԾԽԱՆՈՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1) Առաջին տեսակին պատկանում են թորուկ, թորուկալթի, անաչ և յենթա-անաչ տերևները, հասունացած, դեղին գույնից մինչև կարմիր գույն, յերանգավորումներով, տերևի գլխավոր յերակի յերկարությամբ պարզ-կանաչ գույնով:

Թուլատրելի յեն մեխանիկական չնչին վնասվածքներ, վորոնք չեն անդրադարձել տերևի ընդհանուր հասունացման վրա: Հիվանդություններից ու վնասատուներից վնասվածքներ թուլատրելի չեն, բացի մի կողմի չնչին փասսից (տրիպս):

2. Յերկրորդ տեսակին պատկանում են Ղրիմի ծխախոտերից՝ թեպեն, յենթա անաչը, որթասարի 3, 2, 1-ը և բրինջին, իսկ մնացած ռայոններում—թորուկ, թորուկալթի, անաչ, յենթա-անաչ և խաչամա տերևները, վորոնք բավականաչափ չեն հասունացած կամ մի քիչ չափից անց են հասունացած, ունեն դեղին—կարմիր գույն, յերանգավորումներով, տերևվի ամբողջ մակերեվոյթի վրա պարզ-կանաչավունություն և գլխավոր յերակի յերկարությամբ մույգ — կանաչավանություն (բիրինջի կամ խաչամայի տերևները—միայն պարզ-կանաչավուն գույն):

Մեխանիկական վնասվածքներ թուլատրելի յեն վոչ ավելի, քան տերևվի մեկ քառորդ մասի վրա, նրա ծայրերին. թուլատրելի յեն մի կողմի կամ յերկու կողմի փասսից թեթև վնասվածքներ: Յերկրորդ տեսակի ծխախոտի հակի մեջ վերոհիշյալ վնասվածքներով տերևներ կարող են լինել միայն չնչին չափով:

3. Յերրորդ տեսակին պատկանում են թորուկ, թորուկալթի, անաչ, յենթա-անաչ, և խաչամա տերևները, վորոնք լրիվ չեն հասունացած, լինում են ամեն գույնի ու յերանգի, նաև կինամոնագույն, տերևվի ամբողջ մակերեվոյթի վրա մույգ-կանաչավունությամբ:

Մեխանիկական վնասվածքներ թուլատրելի յեն վոչ ավելի, քան տերևվները կեսի վրա. մի կողմի կամ յերկու կողմի փասսից վնասվածքներ թուլատրելի յեն ամբողջ տերևվի վրա, բայց վոչ համատարած, մոզաիկայի և չեչոտության վրնասվածքներ—վոչ ավելի մեկ յերրորդ մասից, կուլից վնասվածքներ—նույնպես վոչ ավելի մեկ յերրորդ մասից. թուլատրելի յեն չոր-մանտար տերևներ:

Այս նույն տեսակին են պատկանում դիպի կամ դիպսարի տերևները. միայն թե սրանք պիտի լինեն հասունացած և առանց մույգ կանաչավուն գույնի:

Վորպես անհրաժեշտ պայման—բոլոր տեսակի ծխախոտերը չպետք է հողոտ կամ ավազոտ լինեն: Դիպի կամ դիպսարի տերևները պետք է խնամքով մաքրվեն ավազից ու հողից:

Բացի տեսակավոր ծխախոտերից, կան նաև հետեվյալները.—

Սոսան, վորք պեսֆ և արսադուրյան համար: Սրան են պատկանում բոլոր այն տերևները, վորոնք ամբողջովին վրնասված են փասս, մոզաիկ և չեչոտություն հիվանդություններից, ինչպես նաև այն տերևները, վորոնք վոչ ավելի, քան կիսով չափ վնասած են կուլից, բոլորովին վնասված սևացած են, ճզմված, փշրված (բայց վոչ Ֆարմատուրա), չորացել են դաշտում (աշաղ), այրվել են (չորացնելու ժամանակ). Ֆիլիչները, թաց մանտարի տերևները, վորոնք չեն փթում:

Սոսան, վորն անպեսֆ և արսադուրյան համար: Սրան պատկանում են ծխախոտային աղբը, փշրվածքներն ու մրսած, նեխված, բորբոսնած և կուլ հիվանդությամբ կիսով չափ վրնասված տերևները:

Այսպիսով արտահանման ծխախոտերը, համաձայն ՈՍՏ 5113 ստանդարտի, ունենալով համապատասխան վորակ, պետք և բաժանվեն չորս առևտրական տեսակների, իսկ արդյունաբերական ծխախոտերը (համաձայն ՈՍՏ 5112 ստանդարտի)—յերեք տեսակի:

Բացի զրանից, թե մեկ և թե մյուս ստանդարտներով նախատեսված են յերկու տեսակի խոտան,—մեկը արտադրության համար պետքական, մյուսն անպետք:

Գործնականում տեսակավորումը կատարվում է յերկու կերպ.—նախկին կուբանյան շրջանի և Մայկոպի ռայոններում, վորտեղ ծխախոտն առանձնապես մանրակրկիտ տեսակավորում չի պահանջում, տեսակավորումը կատարում է միյնվունյն

անձնավորութիւնը. ծխախոտի մշակումը պարզ դարձնելու համար շարանները մոտավոր կերպով տեսակների յեն բաժանվում և ապա հարդարվում, դրվում են հակերի մեջ: Ամբողջ աշխատանքը գլխավորապես կատարում է հակ կապողների խմբակը, վորակյալ կոլտնտեսականների ղեկավարութեամբ: Տեսակավոր ծխախոտերը շարաններից հանելուց հետո նույնպես մոտավոր կերպով են ջոկում: Փունջ կապողները ջոկում են տերեւները ըստ մեծութեան, դույնի ե այլն և կապում, իսկ տեսակավորողը (ավագ աշխատողը) տեսակների յե բաժանում փնջերը, վորոնցից կապվում են այս կամ այն տեսակի հակեր: Մոշու ռայոնում, վորտեղ ծխախոտերն ոգտագործվում են արտահանման համար և ընդհանրապես մանրակրկիտ մշակում են պահանջում, տեսակավորման աշխատանքը հետեւյալ կերպով է կատարվում.— վորակյալ կոլտնտեսականը (տեսակավորողը) ընտրում է միևնույն վորակի տերեւները և տալիս է հետագա մշակման համար, վորը արդեն մեխանիկորեն կատարու են շարքային կոլտնտեսականները:

Հյուսիսային կովկասի կոլտնտեսութիւններում և խորհունտեսութիւններում հիմնականում այսպես է կատարվում ծխախոտի տեսակավորումը:

Այնուհետեւ նայած ռայոններին և ծխախոտի վորակին, տեղի յե ունենում նրա հետագա մշակումը զանազան ձեւերով:

ՄԻԱԽՈՏԻ ԲԵՐՔԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հյուսիսային կովկասի պայմաններում մշակման ձեւերից պետք է հիշել չորսը — 1) փունջ կապելը, 2) հարդարումը, 3) մշակումը շարաններով, 4) շարաններից հանելը:

1) Փունջ կապելը: Փունջ կապելու համար վերցնում են 18-ից մինչև 25 հատ ծխախոտի տերեւներ, վորոնք պիտի լինեն հարդարված. սրանք դրվում են մեկը մյուսի վրա, պոչերը կապվում են մեկը մյուսին: Փունջ կապելիս միևնույն տեսակի և միաժամանակ քաղած տերեւները ընտրվում են ըստ մեծութեան: Տարբերութիւն կարող է լինել փոշ ավելի քան տերեւի մեկ հինգերորդ մասի չափով: Փնջերի մեջ չպիտի դնել մանտարից, բորբոսանքից և այլ հիվանդութիւններից ու մեխանիկաբար վնասվածքներ: Վորքան լավ է ջոկված ծխախոտը (վերը հիշված պահանջների համաձայն), այնքան

արդյունավետ կլինի նրա մշակումը և տեսութիւնն այնքան շատ յեկամուտ կստանա: Մեզանում, Հյուսիսային կովկասում փնջերը սովորաբար կապում են յեղիպտացորենի հակերի փաթաթաններով:

2) Հարդարում: Այս ձեւը քիչ է տարբերվում փունջ կապելու ձեւից, բայց ավելի արդյունավետ է: Որինակ՝ յեթե փնջիւղ ղեպքում կոլտնտեսուհին որական տալիս է 12 շարան, հարդարելու դեպքում, միևնույն ժամանակվա ընթացքում նա մշակում է 48 շարան: Չոկվում են անպետք և ուվյալ շարանի հիմնական տեսակին անհամապատասխան տերեւները, այնուհետեւ 18—25-ական տերեւներ ներքեւ են իջեցվում և ապա բոլոր այդ տերեւները վերեւից հարդարվու են արնպես, վոր նրանք լինեն իրար վրա: Այս դրութեամբ փնջերը դրվում են հակերի մեջ:

3) Մշակումը ԵԱՐԱՆՆԵՐՈՎ: Այս ձեւը դործադրվում է բացառապես Մամոն ծխախոտի վրա: Նա կայանում է հետեւյալում.— թելը, վորի վրա շարած է ծխախոտը, ձգվում է, այնուհետեւ նրա վրայից հանվում են բոլոր կանաչ, չափից դուրս հասունացած, փչացած և այլն, սովյալ տեսակին անհամապատասխան տերեւները: Թելի վրա մնացած տերեւները մոտեցվում են իրար և դրվում են հակի մեջ, վորտեղ և մամլվում են: Այս աշխատանքը շատ հասարակ է, քիչ ջանքեր է պահանջում, դրա համար ել հանձնարարելի յե: Մակայն պետք է ասել վոր չնայելով այս ձեւի եժանութեան, թելը հակի մեջ թողնելը անցանկալի յե: Միախոտագործութեան մեջ այդ թելերն ոգտագործվում են մի քանի անգամ և ներկայումս հանդիսանում են դեֆիցիտային նյութ: Այս պատճառով նպատակահարմար է հակ կապելիս դուրս քաշել թելերը, քանի վոր Փաբրիկում միևնույնն է, նրանք դուրս կհանվեն:

4) Միախոտի հանելը թելերի վրայից: Մա ծխախոտը մասմաս հանվում է թելից և դարավում հակերի մեջ, առանց հարդարելու, մեծ մասամբ անկարգ դրութեամբ: Այս ձեւը անպետք է, ինչպես գործադրվում էր անցյալ տարիներում, հավանութիւն չի գտնում արդյունաբերութեան կողմից, վորովհետև տերեւներն անկարգ դրվելով հակերի մեջ, փչանում են: Այս պատճառով ներկա տարում այս ձեւի վորխարեն հանձնարարվում է կիրառել հարդարման ձեւը:

Մեր նկարագրած ձեւերը, համաձայն ՈՍՏ 5113 և ՈՍՏ 5112 ստանդարտների սովյալների, կիրառվում են այսպես.—

1. ա) Արտահանման նշանակութիւնն ունեցող բոլոր չորս տեսակի ծխախոտերը, բացի Սամսոնից, մշակվում են փունջ կապելու և հարդարելու ձեւերով: Սամսոն ծխախոտը մշակվում է վերը հիշված յերրորդ ձեւով:

բ) Արտահանման նշանակութիւնն ունեցող ռայոնների (բացի Սամսոն ծխախոտի ռայոններից, վորտեղ ինչպես խոտանն, այնպես ել տեսակավոր ծխախոտը մշակվում է յերրորդ ձեւով) ծխախոտերի խոտանը, վորը պետքական է արտադրութեան համար, մշակվում է չորրորդ ձեւով: հակերի մեջ դնելիս պետք է այնպես դարսել, վոր պոչերը մի կողմ լինեն, իսկ տերեւները վերին մասերը — մյուս կողմը:

2. ա) Արդունաբերական նշանակութիւնն ունեցող բոլոր տեսակների (յերեք տեսակ) ծխախոտերը մշակվում են յերկրորդ և յերրորդ ձեւերով:

բ) Արտադրութեան համար պետքական խոտանը մշակվում է յերրորդ ձեւով, հակի մեջ տերեւները դրվում են այնպես, վոր պոչերը լինեն մի կողմում, վերին մասերը — մյուս կողմում:

Հակ կապելը: Այս կամ այն ձեւով մշակված ծխախոտերը հակ են կապվում: Հակ կապելով վերջանում է ծխախոտի գյուղատնտեսական աշխատանքը: Հակ կապելու համար գործ է ածվում մի առանձին արկղ, վորը չունի հատակ և կափարիչ և նրա պատերը հեշտութեամբ բացվում են: Արկղը դրվում է հատակի (փայտիկների) վրա և նրա մեջ դարպվում են ծխախոտի փնջերը: Սրանք նորից ու նորից նայվում են և անհամապատասխան տերեւները ջոկվում են: Փնջերը դարսվում են շարք-շարք և այնպես, վոր յերեք քառորդ մասով ծածկեն իրար: Հակի լայնութեամբ դարսվում է յերկու շարք, վորոնց մեջ տերեւների պոչերն ուղղված են լինում հակառակ կողմերը, իսկ տերեւների ծայրերը նրանց մեկ յերրորդ մասի չափով իրար վրա յեն դրվում: Ստանդարտի համաձայն, հակի բարձրութիւնը պիտի լինի 53 սանտիմետր, իսկ յերկարութիւնը 80 սանտիմետր: Յերը հակը պատրաստ է, արկղը հանվում է և հակը կապվում է վերեւից ու ներքեւից յերեքական փայտիկների ոգնութեամբ, վորոնց ծայրերը ձգվում են պարանով:

Հակ կապելու հիմնական կանոնները տրվում են ՈՍՏ 5112 և ՈՍՏ 5113 ստանդարտներում, վորը մենք բերում ենք այստեղ և վորը վերաբերվում է Հյուսիսային կովկասում ծրխախոտի հակեր կապելուն:

ա) Դեղին ծխախոտի տերեւների յուրաքանչյուր հակը պետք է պարունակի միևնույն տեսակի սերմի ծխախոտ, միևնույն ռայոնում աճող, միևնույն ձեւով աճեցրած (անջրդի կամ ջրովի), միևնույն ձեւով չորացրած (արեւի տակ կամ արհեստական կերպով), միևնույն յեղանակով մշակված, միևնույն տերեւահատից, միևնույն ապրանքային տեսակից և միատեսակ գույնի:

Վորպես բացառութիւն, թույլ է տրվում միասին հակ կապել հետեւյալ տերեւահատերի ծխախոտը (պահպանելով ապրանքային տեսակների վերաբերյալ նշանները). — տիկիւլակ և Տրապիզոն ծխախոտերի համար — թորուկ, թորուկ-ալթի, անաչ և յենթա-անաչ:

Ձի թույլատրվում հակի արտաքին կողմերից ուրիշ տեսակի ծխախոտեր դնել:

բ) Սամսոն և այլ տեսակ ծխախոտերը, վորոնք մշակվում են «հարդարման» ձեւով, 1-ին, 2-րդ ու 3-րդ տեսակներում պետք է պարունակեն վոչ պակաս, քան 85 տոկոս հիմնական տեսակ և 15 տոկոսից վոչ ավելի հետեւյալ, ստորադաս տեսակից:

Չորրորդ տեսակը 100 տոկոսով պետք է միակերպ լինի: 15 տոկոս ասելով պիտի հասկանալ վոչ թե ամբողջ շարաններ կամ շարքեր ստորադաս տեսակներից, այլ առանձին տերեւներ, վորոնք կարող են 15 տոկոսի սահմաններում գտնվել շարանների կամ շարքերի մեջ:

Սամսոն ծխախոտի հակերում կողքերից փնջեր դնել չի թույլատրվում:

Ձի կարելի ծխախոտը հակերում դարսել «թարաֆլի, ճշմուրջուկ» ձեւերով, յերկար շարքերով, հակի մեջ դատարկ տեղ թողնելով, կողքի վրա և ընդհանրապես այնպիսի ձեւերով, վորոնք խախտում են հակերի միատեսակութիւնը:

1) «Թարաֆլի» կոչված ձեւով դարսելը նրանումն է կայանում, վոր առջևի շարքերում դարսվում է ծխախոտի հիմնական տեսակը, իսկ յետեւի (հակառակ կողմի) շարքերում դարսվում է ստորադաս տեսակի ծխախոտը:

2) Չամուրլուկ կոչվում են տերեւների փնջերը, վորոնք դրվում են հակերի վերեւից ու ներքեւից, հակի մեջ գտնւրվող ծխախոտի հիմնական տեսակը կեղտոտվելուց և մեխանիկական վնասվածքներից պաշտպանելու համար:

3) Կողքի դարսելը նրանուամն և կայանուամ, վոր հակի մեջ փնջերի, կապոցների մի մասը տերեվների տարածության կեսի չափ դրվում են մյուս փնջերի ու կապոցների մեջ:

Վորպես կանոն, չափից ավելի խոնավ կամ չոր ծխախոտը հակ չի կապվում:

Ինչպես վորոշել ծխախոտի չափից դուրս խոնավությունը:

Հակ կապելիս այդպիսի ծխախոտի տերեվները պինդ կպչում են իրար և անջատելիս հարդարման կարիք են զգում:

Չափից դուրս չոր համարվում են այն ծխախոտերը, վորոնց տերեվները հակ կապելիս ջարդվում են, վորովհետեւ բացակայում է նորմալ խոնավությունը:

դ) Բոլոր տեսակ ձեւերով մշակված ծխախոտերը պետք է հակերի մեջ դրվեն կանոնավոր, պոչերը դեպի դուրս, այնպես, վոր նրանք իրար վրա լինեն և նկատվեն առանց հակը բանալու: Փնջերը, կապոցները և շարանները հակի մեջ պիտի դարսվեն յերկու շարքի, իսկ մի շարքի տերեվների վերին մասերը պետք է ծածկեն մյուս (հակառակ կողմի) շարքի տերեվները—վոչ պակաս քան տերեվների մակերեւոյթի մեկ յերրորդի և վոչ ավելի, քան նրանց կեսի չափ:

յե) Խոտանը (վորը պետքական է արուադրության համար), վորը հանվում է շարաններից, կամ ստացվում է տեսակավոր ծխախոտերի մշակումից, հակ է կապվում տերեվները յերկու շարք դարսելով, նրանց պոչերը դեպի դուրս:

զ) Հակ կապելիս չի կարելի ծխախոտը սաստիկ մամլել:

ե) Յուրաքանչյուր հակ պիտի ունենա չոր, կեղեվից մաքրած, համահավասար, տափակ, առանց սուր անկյունների ու ծայրերի ձողեր, յերեք հատ հակի վերեվից, յերեքն էլ ներքեվից: Չողերը պիտի լինեն մաքուր, առանց ավելորդ մակագրությունների: Չողերի ծայրերը հակի ամեն մի կողմից պետք է դուրս ընկած լինեն 4 սանտիմետրի չափ:

Չողերը պետք է ամուր ձգված լինեն դեպի իրար: Ներքեվի ձողերը պետք է կապվեն:

Հակի մեջ բոլոր ձողերի կշիւր 4 կիլոգրամից ավելի չը պիտի լինի:

ը) Հակի մեծությունը հետեւյալն է—80 սանտիմետր յերկարություն և 63 սանտիմետր բարձրություն: Լայնությունը կախված է տերեվների յերկարությունից:

ա) Իեղին ծխախոտի յուրաքանչյուր հակի մեջ պետք է լինի միևնույն տեսակ սերմի ծխախոտ, միևնույն ռայոնում աճող, միևնույն ձեւով աճեցրած (անջրդի կամ ջրովի), միևնույն ձեւով չորացրած (արեվի տակ կամ տաքացվող չորանոցներում), միևնույն ձեւով հետագայում աճեցված, միևնույն տերեվահատից, միևնույն ապրանքային տեսակի և միատեսակ գույնի:

Վորպես բացառություն, թույլտրելի յե միասին հակ կապել հետեւյալ տերեվահատերի ծխախոտերը (պահպանելով ծխախոտի ապրանքային տեսակների վերաբերյալ նշանները). —Թորուկ, Թորուկալթի, անաչ և յենթա-անաչ, Թիկկուլակ և Տրապիգոն:

Հակերի վրայից կամ տակից ուրիշ տեսակի ծխախոտ դնել չի կարելի:

Շարաններով ծխախոտի հակերում կողքից փնջեր դնել չի թույլատրվում:

բ) Շարաններով հակ կապվող և «հարդարման» ձեւով մշակված ծխախոտերն առաջին, 2-րդ և 3-րդ տեսակներում պետք է պարունակեն հետեւյալ, ստորադաս տեսակից վոչ ավելի, քան 15 տոկոս և վոչ պակաս, քան 85 տոկոս հիմնական տեսակից: 15 տոկոս ասելով պիտի հասկանալ վոչ թե ստորադաս տեսակի ամբողջ շարաններ կամ շարքեր, այլ միայն առանձին տերեւներ վերադաս ծխախոտի շարաններում 15 տոկոսի սահմանում:

Ինչպես արտահանման, այնպես էլ արւյունաբերական ծխախոտերի վերաբերյալ պիտի ասել հետեւյալը.— չի կարելի ծխախոտը հակերում դարսել թաղափլի, չամուրլուկ կոչված ձեւով, յերկար շարքով, կողքի վրա, հակի մեջ դատարկ տեղ թողնելով և ընդհանրապես այն ձևերով, վորոնք խախտում են հակի միատեսակությունը:

գ) Ծխախոտը հակերի մեջ պետք է դարսվի կանոնավոր, տերեւների պոչերը դեպի դուրս, այնպես վոր նրանք լինեն իրար վրա և յերեւան առանց հակը բանալու:

Ծխախոտի շարանները կամ տերեւների փնջերը հակի մեջ պետք է դարսվեն յերկու շարքով, իսկ մեկ շարքի տերեւների վերին մասերը պետք է ծածկեն մյուս շարքի (հակառակ կողմի) տերեւները վոչ պակաս, քան տերեւի մեկ յերրորդ մասով և վոչ ավելի, քան կիսով չափ:

դ) Խոտանը, վորը պետք է արտադրութեան համար, շահանքով և կամ փունջ կապած (վորակավոր ծխախոտերի տեսակավորումից մնացած ավելորդութիւնները), հակ է կապուում այսպէս.—տերևները հակի մեջ դարսվում են յերկու շաբթ, պոչերը դեպի դուրս:

յե) Հակ կապելիս չի կարելի սաստիկ մամլել ծխախոտը:

զ) Յուրաքանչյուր հակ պիտի ունենա չոր, կեղևից մաքրված, համահավասար, տափակ, առանց սուր անկյունների ու ծայրերի փայտյա ձողեր,—յերեք հատ հակի վերևից, յերեքն էլ ներքևից: Ձողերը պիտի լինեն մաքուր, առանց ավելորդ մակագրութեան: Նրանց ծայրերը հակի ամեն կողմից պիտի 4 սանտիմետրի չափ դուրս ցցվեն:

ե) Ձողերի ծայրերը պետք է ձգվեն դեպի իրար: Ներքևի ձողերը պիտի կապված լինեն իրար հետ:

Յուրաքանչյուր հակի մեջ ձողերի կշիւր պետք է լինի հետևյալ չափով.—առաջին տիպի ծխախոտերի համար (դուրբեկ) — $2\frac{1}{2}$ կիլոգրամից վոչ ավելի, իսկ մնացած տիպի ծխախոտերի համար—4 կիլոգրամից վոչ ավելի:

Հակի մեծութիւնը—80 սանտիմետր յերկարութիւն և 30 սմ բարձրութիւն լայնութիւնը կախված է տերևների յերկարութիւնից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՅԵՎ ՈՒՅԺԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԻ ՍՇԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ծխախոտի բերքի վորակը պահպանելու տեսակետից նրա հետագա մշակման հարցը ամենակարևորներից է: Մշակման գործը, վորով վերջանում են ծխախոտի վրա թափված բոլոր աշխատանքները և վորով տրվում է յուրաքանչյուր կուտնտեսութեան ու խորհանտեսութեան տարեկան աշխատանքի հանրագումարը,—այդ գործը պիտի դրվի որինակելի կերպով: Հակառակ դեպքում, թեթե գոյութիւն ունենա անփուլթ վերաբերմունք դեպի այդ աշխատանքները,—չառ բան կկորցնեն և ծխախոտը չի տա իր խոշոր արդիւնքները:

Ծխախոտագործական կուտնտեսութեանների և խորհանտեսութեանների աշխատանքի թույլ, նեղ տեղերից մեկը հանդիսանում է աշխատանքի կազմակերպումն և ուժերի դասավորութիւնը: Ուժերի ճիշտ դասավորութիւնը, գործավարձի լայն կիրառման հիմունքով աշխատանքի բարձր արտադրողականութիւնը, ճիշտ սահմանված նորմաները, աշխատանքի հա-

մապատասխան գնահատումն և հաշվառքը,—այս բոլորը կանխորոշում են ծխախոտի լավագույն մշակումը, ժամանակին հանձնումը, տնտեսութեան բարձր յեկամունքները: Դա վերջին հաշվով նպաստում է կուտնտեսութեանների ու խորհանտեսութեանների տնտեսական ամրացման:

Մեր ասածը պարտավորեցնում է սոցիալիստական տնտեսութեանների՝ ամբողջ լրջութեամբ վերաբերվել դեպի ծխախոտի մշակումը: Այն բոլոր կորուստները, վորոնք յեղել են շնորհիվ անժամանակ բերքահավաքման, ծխախոտի բերքի մշակման աշխատանքները խնամքով, ազրոտեխնիկայի բոլոր կանոնների համաձայն կատարելու դեպքում կլրացվեն:

Զ⁶ է վոր շատ կուտնտեսականների համար գաղտնիք չէ այն հանգամանքը, վոր անցյալ տարիներում, շնորհիվ ծխախոտի բերքի վատ տեսակավորման, բավական քանակութեամբ բարձր տեսակի ծխախոտ տակովն յեղավ, խոթվեց ցածր տեսակի հակերի մեջ և ցածր գնով վաճառվեց: Անցյալ տարվա սակի հակերի մեջ և ցածր գնով վաճառվեց: Անցյալ տարվա նախաժամկետային մթերման ժամանակ, յերբ նախատեսվում էր դիպարի հանձնումը, զգալի քանակութեամբ տեսակավոր, նույնիսկ արտահանման ծխախոտ վաճառվեց եժան գնով և այն էլ իսկ արտահանման ծխախոտ վաճառվեց եժան գնով և այն էլ միայն նրա համար, վոր կուտնտեսութեանները թերազնահամարից նրա համար, վատ կատարեցին ծխախոտի բերքի տեյին այս հանգամանքը, վատ կատարեցին ծխախոտի բերքի մշակման աշխատանքները, այսինքն՝ տեսակավորումն և հակ կապելը:

Ներկա մթերման կամպանիայի ժամանակ կուտնտեսութեանները պետք է հաշվի առնեն այս սխալը և հենց սությունները պետք է հաշվի առնեն այս սխալը և հենց սուկզբից թույլ չտան կրկնութիւնը: Սա առանձնապէս հարկասկզբից թույլ չտան կրկնութիւնը: Սա առանձնապէս համար, վոր է արտահանման ծխախոտ մշակող ուսուցանների համար, վոր է արտահանման ծխախոտ մշակող առանձնապէս լավ աշխատանք է պահանջվում:

Նախ քան ծխախոտի բերքի մշակումը, արտադրական բերքազը նախապէս պետք է քննի յերկու ստանդարտները համապատասխան խորհրդակցութեան մեջ: Յուրաքանչյուր համապատասխան կուտնտեսութեանների պետք է գիտենա թե արկուտնտեսական և կուտնտեսութեանի պետք է գիտենա թե արկուտնտեսական և կուտնտեսութեանի պետք է գիտենա թե արտահանման ստանդարտը, վորպէսզի դուրսաբերական և թե արտահանման ստանդարտը, վորպէսզի տեսակավորման, փունջ և հակ կապելու ժամանակ սխալներ տեսնեն, այլ ընդհանակառակը, լավ վորակի աշխատանքներ կատարեն:

Ինկատի ունենալով շուկայային կովկասի ծխախոտերի բերքի մշակման ձևերը, կարելի չէ հանձնարարել աշխատող խմբակների հետևյալ չափն ու աշխատանքների կարգը:

Իրպատրի և մասամբ խաշլամայի նախաժամկետային մը-
թերման դեպքում ծխախոտի բերքի մշակման աշխատանքները
գուգադիպում են բերքահավաքման ու չորացման: Այն ժամա-
նակ կարելի յե չորացնողների խմբակին հանձնարարել նաև
դիպատրի մշակումը՝ նախաժամկետային մթերման համար:
Այսպիսի խմբակը կարող ե կազմված լինել վորակյալ հակ
կապոդից և յերկու կոլտնտեսականներից, վորոնք պետք ե
կրեն ծխախոտը: Հակ կապոդի որական աշխատանքի նոր
ման 6 հակ ե, իսկ ծխախոտը կրողների նորման—150
շարան:

Տեսակավոր ծխախոտերի բերքի մշակումը, նայած նրանց
վորակին և ուայոններին, այս տարի պիտի կատարվի «հար-
դարման» և շարանային ձևով: Խմբակների մեծությունը պետք
ե վորոշել, նայած թե մշակման վոր ձևն ե կիրառվում:

Ինչպես մենք արդեն ասել ենք, փունջ կապելու ձևը
պետք ե կիրառվի նախկին կուբանյան շրջանի, Մայկոպի և
ժովափնյա «Տրապիզոն» ծխախոտի համար:

Այս աշխատանքը խիստ պարզ ե,—տեսակավորված ծխա-
խոտը փունջ ե կապվում, վորից հետո փնջերը դիտվում են,
տեսակ-տեսակ դարավում և հակ են կապում: Յեթե ծխախո-
տը լավ վորակի յե (ժովափնյա), այս աշխատանքն ավելի
մանրակրկիտ ե կատարվում. շարաններից հանված ծխախոտը
վորակյալ կոլտնտեսականը (տեսակավորողը) բաժանում ե
յերեք-չորս տեսակների: Փունջ կապողներն ամեն մի տեսակն
առանձին են հարգարում, ջոկում են տերևներն ըստ մեծու-
թյան և փունջեր են կապում: Հակ կապողն այդ փնջերից
հակ ե կապում: Այս յերկու ձևերն ել կարելի յե կիրառել
կոլտնտեսություններում: Նայած թե վորչափ վորակյալ աշ-
խատողներ կան, լավագույն ծխախոտերի վրա պետք ե աշ-
խատեցնել վորակյալ կոլտնտեսականներին և կատարել ծխա-
խոտի բերքի մշակումը:

Բերքի մշակման այս ձևը պետք ե կիրառել այն կոլտն-
տեսություններում, վորոնք արտահանման ծխախոտ են մշա-
կում: Այս դեպքում ուժերը դասավորվում են հետևյալ կերպ.—
տեսակավորողը, վոր միևնույն ժամանակ խմբավար ե, պա-
հեստից կապոցներով սաացված ծխախոտը բաժանում ե յերկու,
յերեք-չորս տեսակների, առաջնորդվելով այն նշաններով, վո-
րոնցով վորոշվում ե արտադրանքի վորակը: Կոլտնտեսային-
ներն այս տեսակավորված ծխախոտը փունջ են կապում:
Ինկատի ունենալով առանձին աշխատանքների բարդությունը

և մարդկանց վորակը, այդ խմակների մեծությունը կարող ե
լինել այսպես.—

Տեսակավորող	1	նայած ծխախոտի չափին-ման րատերև ծխախոտի վրա աշխատելու համար ավելի շատ մարդ կպահանջվի:
Փունջ կապողներ	8—10	
Հակ կապող	1	
Ծխախոտ կրող	1	

Ընդամենը 11—13 կոլտնտեսական:

Մեծ ափ կոշված ուայոնների Մամոն և բացառապես
արտահանման ծխախոտերը մշակվում են շարանային ձևով:
Տեսակավորողը ջոկում ե շարանների վրա գտնված ծխախոտը,
պոկելով անպետք տերևները: Այնուհետև հակ կապողն ընդու-
նում ե շարանների վրայի տերևներն և հակ կապում: Չոր
ծխախոտը կրողների վրա պարտականություն ե ընկնում հա-
վաքել բոլոր պոկված տերևները՝ հետագայում հակ կապելու
համար: Նպատակահարմար ե, վոր խմբակի կազմը լինի այսպես՝

Տեսակավորող	1
Հակ կապող	2
Ծխախոտ կրող	2—3
Ընդամենը	6 մարդ:

Վերջապես, «հարդարման» ձևով մշակումն այս տարի խոր-
հուրդ ե տրվում կատարել արդյունաբերական նշանակու-
թյուն ունեցող բոլոր ծխախոտերի վերաբերյալ: Այս ձևն ա-
վելի քիչ աշխատանք ե պահանջում, քան թե փնջելը, սա-
կայն ավելի շատ ծախսեր ե պահանջում, քան շարանային
և շարաններից ծխախոտը հանելու ձևերը:

Աշխատանքների կարգը հետևյալն ե.—տեսակավորված
ծխախոտի շարանները տրվում են կոլտնտեսականներին, տե-
րևները փոքր փնջերով հանելու, նրանց հարգարելու և ապա
հակերի մեջ դնելու համար: Այս դեպքում խմբակը պետք ե
բաղկացած լինի 6—7 հոգուց,—1 տեսակավորող, 4 կոլտն-
տեսական՝ ծխախոտը շարաններից հանող և հարգարող, 1 հակ
կապող և մեկ հոգի ծխախոտի կապոցները կրող:

Ահա մտավորապես մեր հանձնարարած խմբակների մե-
ծությունը և ուժերի դասավորությունը ծխախոտի բերքի
մշակման ժամանակ:

Ծխախոտի բերքի մշակումը հաջող անցկացնելու գործում վճռական նշանակություն ունեն աշխատանքի սոցիալիստական մեթոդները, գործավարձի կիրառումը, կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունն այս կամ այն գործը կատարելու համար:

Վորպեսզի կազմակերպել աշխատանքի սոցիալիստական ձևերը, կոլտնտեսականների փոխադարձ մրցումը, բավական չե սահմանափակվել միմիայն խոսքերով, համոզելով: Հարկավոր է գործնականորեն ցույց տալ սոցիալիստական մրցութային և հարվածայնություն արդյունքները, ցույց տալ բրիգադների, խմբակների միջև յեղած մրցման հետևանքը: Այս ընդունված պետք է մասնակից դարձնել կոլտնտեսականներին, պետք է այնպիսի դրուժյուն ստեղծել, վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսական տեր զգա իրեն, պայքարե՝ աշխատանքի մեջ առաջնության ձեռք բերելու համար, կատարե պլանը և ամրապնդե կոլեկտիվ անտեսությունը:

Հարկավոր է գործնականապես կիրառել գործավարձը, նյութական շահագրգռվածությունը, վորպես գլխավոր խթաններ աշխատանքի արդարորդականության բարձրացման, ծխախոտի բերքի մշակումը ժամանակին վերջացնելուն: Հարվածային կոլտնտեսականները և բոլոր լավ աշխատողները պետք է նյութապես ավելի լավ դրուժյան մեջ լինեն, առաջին հերթին ստանան բնամթերքային կանխավճարներ (նատուրալ ավանսներ), ինչ վոր պետությունը բաց է թողնում կոնտրակտացիայի կարգով, ծխատոտի բերքահավաքը, հետագա մշակումն և հանձնումը խթանելու համար: Հաշվառքը կանոնավոր հիմքերի վրա պետք է դրվի:

Հարկավոր է բրիգադում և կոլտնտեսության մեջ ստեղծել այնպիսի դրուժյուն, վոր կոլտնտեսականը վոչ ուշ, քան հնգորդակը մեկ անգամ իմանա, թե ինչ է վաստակել: Հարկավոր է աչքի առաջ ունենալ կոլտնտեսականի աշխատանքի վոչ միայն քանակը, այլ և վորակը: Արդեն վաղուց ժամանակ է կոլտնտեսություններում նյութական պատասանավորությունը կիրառելու: Անկավար օրգանների կողմից արդեն վաղուց դրված է այն հարցը, վոր վաստ աշխատանքի համար, վորից տնտեսությունը մնաս է հասել, պետք է պատասխանատու լինեն կոլտնտեսականները, այդպիսի աշխատանքի համար պետք է իջեցնել նրանց աշխուրհը (ըստ համապատասխան տախտակների) և, ընդհակառակը, լավ աշխատանքի համար, բրիգադից ու կոլտնտեսականներից ստացված լավ արտադրանքի համար

պարգևատրել թե ամբողջ բրիգադը և թե խմբակներն և առանձին կոլտնտեսականներին: Աշխատանքի միայն այսպիսի մեթոդներով կարելի յե ամրապնդել կոլտնտեսությունների կազմակերպչական ու ֆինանսական կարողությունը:

ԾԽԱԽՈՏԻ ՀԱԿԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Վորպես կանոն, հակ կապած ծխախոտն իսկույն և յեթ պետք է հանձնվի մթերակայաններին: Իսկ այն դեպքերում, յերբ կոլտնտեսություններից անկախ վորևե պատճառով իսկույն չի կարելի հանձնել, հակ կապած ծխախոտը պետք է պահվի հետևյալ կանոնների համաձայն:

ա) Ծենքը չպիտի ունենա անցքեր: Հատակն ու առաստաղը պիտի լինեն փայտից: Դռներն ու լուսամուտները պետք է պինդ փակվեն: Յեթե հատակը քարից է, հակերը պետք է դնել միայն փայտյա պատվանդանների վրա և վոչ թե անմիջապես հատակի վրա: Հակերը պահպանելու ամբողջ ժամանակի ընթացքում շենքը միշտ պետք է փակ լինի, հակառակ դեպքում, արևոտ յեղանակին ծխախոտը կարող է վաղաժամ ֆերմենտացիայի յենթարկվել, իսկ անձրևոտ յեղանակին նա կարող է խոնավանալ:

Չոր յեղանակին շենքում պետք է օդափոխություն կատարել, 2—3 ժամով բանալով դռներն ու լուսամուտները:

Նախ քան հակերը տեղավորելը, շենքը պիտի լավ դիտել և յեթե այնտեղ լինեն թաց տեղեր, դրանք անպայման պիտի չորացնել:

Չորացնելու համար կարելի յե հանձնարարել հետևյալը. . . թաց տեղերում, վոչ խորը արկղների մեջ դնել չհանգցրած կիր, կիրը հանգչելուց հետո պետք է վերցնել: Յեթե կիր չկա, կակիր, կիրը հանգչելուց հետո պետք է վերցնել: Կամ փայտաբլի յե չորացնել կամ յերկաթե վառարաններով, կամ փայտաբլի յե չորացնելուց հետո թաց տեղերը դնելով: Չի կարելի շենքում ջրով լի տակառներ դնել (հրդեհից պաշտպանելու համար), վորովհետև ծխախոտը հեշտությունը է ծծում խոնավությունը: Ֆերմենտացիայի չյենթարկված ծխախոտերը տեղափոխելիս վոչ մի կերպ չի կարելի հակերը դարսել վանդակների խելիս վոչ մի կերպ չի կարելի հակերը պահպանել, վոր ուրն աձևով, — նրանք պետք է տեղավորվեն այնպես, վոր ուրն ազատ կերպով մուտք ունենա դեպի նրանց:

Ծխախոտի պահպանության հսկողությունը բացառապես պետք է հանձնել այն մարդկանց, վորոնք զիտեն այդ գործը և ունեն անհրաժեշտ փորձառություն: Ծխախոտագործության

մասնագետները ժամանակ առ ժամանակ պետք է դիտեն ծր-
խախտտի պահեստի շենքերը:

**ԾԽԱԽՈՏԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ, ՇԻՎԱՆԴՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ. ԶԱՆԱԶԱՆ
ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ԿՌՎԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Մեր գործույթի այս գլխում մենք կաշխատենք խոսել այն
վնասատուների, հիվանդությունների և մեխանիկական վնաս-
ման պատճառների մասին, վորոնք փրաս են հասցնում դաշտից
հավաքված ծխախոտին, նրա մշակման ժամանակ:

Յուրաքանչյուր կոլտնտեսական ծխախոտագործ պետք է
գիտենա ծխախոտի վնասատուների մասին, պետք է գիտենա
նրա հիվանդությունների և զանազան մեխանիկական փչացում-
ների պատճառները:

Թշնամուն հարվածելու համար պետք է ճանաչել նրան,
նրա զենքը, նրա թույլ կողմերը:

Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարը
հաջողակ կլինի և տնտեսապես ձեռնտու այն ժամանակ,
յերբ նա մղվում է կազմակերպված կերպով: Կոլտնտեսու-
թյունների ու խորհանտեսությունների գրեթե բոլոր ծխախո-
տագաշտերում կան այդ պայքարը մղելու պայմանները:

Վորոնք են ծխախոտի վնասատուներն ու հիվանդու-
թյունները, վորոնք են այն պատճառները, վոր ծխախոտի տե-
րևների մեխանիկական փչացումն են առաջ բերում և հաճախ
պատահում են ծխախոտի բերքի մշակման ժամանակ:

Վնասատուներից պետք է հիշել ծխախոտի ցեցը և բզեզը:
Ճիշտ է, այս վնասատուները բացառապես պատահում են
ծխախոտի պահեստներում, վորտեղ սովորաբար յերկար ժամա-
նակով հավաքվում է մեծ քանակությամբ ծխախոտ:

Սակայն հնարավոր է, վոր այդ վնասատուները յերևան
նաև կոլտնտեսությունների սովորական ծխախոտապահեստնե-
րում, վորտեղ կարող է հավաքվել հակ կապած ծխախոտը, նախ
քան մթերակայան ուղարկելը:

Ի՞նչ է ներկայացնում իրենից ծխախոտի ցեցը և ի՞նչ
վնաս է հասցնում ծխախոտին:

Ծխախոտի ցեցը մի փորրիկ թիթեռ է, 1,5 սանտիմետր
յերկարությամբ: Նրա առջևի թևերը պարզ—կինամոնագույն
են, իսկ յերևի թևերը—մոխրագույն:

Ցեցերն սկսում են թռչել ապրիլ ամսից:

Մեկ թիթեռը,—եզը,—իր ամառային կյանքի ընթացքում
ծխախոտի տերևների ու նրանց պոչի վրա դնում է 130 ձու: Ճի-
ճուռանման թրթուռները ձվերից դուրս են գալիս մի քանի օրերից
հետո: Թրթուռը ապրում է 2 ամիս, մինչև հարսնյակ դառնա-
լու մոմենտը: Թրթուռի յերկարությունը հասնում է 1—1,5
սանտիմետրի: Ունի դեղնագույն—սպիտակ գույն:

Թրթուռը ծխախոտի տերևին սկսում է վնասել պոչի կող-
մից: Վնասը նրանում է կայանում, վոր թրթուռն ուտում է
տերևի փափուկ մասը, թողնելով նրա վրա իր արտաթորանք-
ները:

Յեթե տերևը մեծ չափով է վնասվում, նրանից մնում են
միայն յերակները և տեղ-տեղ փափուկ մասեր:

Թրթուռի հարսնյակ դառնալուց 10—15 օր հետո դուրս
է գալիս թիթեռների յեղկորոգ սերունդը, վորը թռչում է
հուլիս ամսում:

Սեպտեմբերին հարսնյակներից դուրս է գալիս յերրորդ
սերունդը, վորն այդ նույն ամսում ձվեր է դնում:

Այդ ձվերից դուրս յեկող թրթուռները վերահաս ցրտերի
հետևանքով մինչև վերջ չեն զարգանում և ձմեռում են ծխա-
խոտի տերևների վրա:

Նրանք հարսնյակ են դառնում միայն գարնանը և այդ
ժամանակ ել տալիս են թրթուռների զարնանային սե-
րունդը:

Ծխախոտի ցեցը նրա ցածր տեսակներին և չոր ծխախոտի
վրա չի յերևում:

Սովորաբար նրանցից վնասվում են փափուկ, խոնավ, վո-
րակավոր, համով քաղցրավուն ծխախոտերը:

Այս վնասատուների դեմ պայքարելու համար, հաշվի
առնելով, վոր կոլտնտեսությունների և խորհանտեսությունների
ծխախոտի պահեստներում և հակ կապելու շենքերում վերջին
վնասատուն չի կարող մեծ չափով տարածվել, կարելի յե ա-
ռաջարկել հետևյալը.—

1. Մաքուր պահել ծխախոտի պահեստը և հակ կապելու
շենքը, չթողնել ծխախոտի բերքի մշակումից առաջացած
աղբը:

2. Շենքերում օդի ջերմության աստիճանը պետք է լի-
նի այնպես, վորպեսզի հակ կապած ծխախոտը չխոնավանա:

3. Յեթե պահեստը զգալի չափով վաքակված է այդ վնա-
սատուներով, հարկավոր է ախտահանում կատարել, գործածե-
լով ծծմբաածխածին, քլորոպիկլին, ծծմբազագ:

Ախտահանումը (հականեխումը) կատարելուց առաջ հարկավոր է ծածկել պահեստի բոլոր դռները, լուսամուտները և ձեփել անցքերը:

Ախտահանութեան ընթացքը տևում է 3 օր:

Յեթե ախտահանման ժամանակ պահեստում ծխախոտ կա, ապա առաջարկվում է ոգտագործել միայն ծծմբաածխածին, վորովհետև նա մյուս դեղերի համեմատութեամբ շատ չնչին չափով է անդրադառնում ծխախոտի վորակի վրա (ծխախոտն ավելի մթին յերանգ է ստանում):

Սորհուրդ է տրվում այս դեպքում գործածել մյուս թույնները, վորովհետև ծխախոտը կարող է ավելի մեծ չափով փչանալ:

Ծխախոտի մյուս վնասատուն է այսպես կոչված՝ ծխախոտի բզեզը:

Այս վնասատուն մի փոքրիկ միջառ է, 2—4 սանտիմետր յերկարութեամբ, կլինամոնագույն—կարմիր գույնով:

Վորովհետև նա բաղմանում և ապրում է գլխավորապես տաք կլիմայի պայմաններում, ուստի նա ամենից շատ պատահում է Սև ծովի ափերին, վորտեղ և վնասներ է հասցնում ծխախոտին:

Ծխախոտի բզեզը մեկ տարվա ընթացքում տալիս է 3—5 սերունդ: Մեկ եզն իր կյանքի ընթացքում զնում է մինչև 100 ձու:

Ձվերից դուրս յեկող թրթուռներն ապրում են 1—2 ամիս, ուստի ծխախոտի տերևների փափուկ մասերը:

Սովորաբար ծխախոտի փնջերի մեջ նրանք մեծ չափով են կրծում տերևները,

Ծխախոտի բզեզը վնաս է հասցնում գլխավորապես նրա բնքույշ բուրավետ տեսակներին:

Պայքարի միջոցները նույնն են, ինչ վոր ծխախոտի ցեյի դեմ:

Հակ կապած ծխախոտը պահեստներում և, առհասարակ, շենքերում պահելիս, վորտեղ խոնավությունը 70 տոկոսից ավելի չէ, ծխախոտի վրա յերևում է այսպես կոչված՝ բորբոսանքը:

Նա մատավորապես նույնն է, ինչ վոր յերևում է հացի կամ օւրիչ ուտելիզենի վրա, յերբ վերջիններս պահվում են թաց տեղերում:

Յեթե շենքում խոնավությունը 70 տոկոսից ավելի չէ, չոր ծխախոտի մեջ պարունակված խոնավությունն ավելանում է, մտնավանդ խոնավ ծխախոտի մեջ:

Հենց դրանից էլ ծխախոտը բորբոսանում է, վորի պատճառը հատուկ որգանիզմներ են, վորոնք կոչվում են բորբոսանքի սունկեր:

Բորբոսանքը դարգանում է ծխախոտի տերևի և սրա պոչի վրա, ուսում է տերևի հյութերը: Բորբոսած հումութն անպետք է վերամշակութեան համար, վորոհետև նրա միջոցով հետագայում կարող է բորբոսնել պատրաստի արտադրանքը (գլանահները, պատրաստի ծխախոտը և այլն):

Տաքացվող շենքերում չորացած ծխախոտը (Մայկուպի և Կուբանի) չափազանց դիմացկուն է բորբոսնելու դեմ:

Սա բացատրվում է նրանով, վոր արհեստական չորացման ժամանակ բարձր շերմությունը (60°—70°) նպաստավոր ներգործութիւն է ունենում և հավանորեն վոչնչացնում է բորբոսանքի սունկերը, վորոնց մասին մենք արդեն հոսեցինք:

Ծխախոտի հումութի բորբոսանումը շատ հաճախ սկսվում է դեռ ֆերմենտացիայի ժամանակ. այստեղ հարկավոր է շեշտել, վոր կանոնավոր ֆերմենտացիայի յենթարկված ծխախոտն ավելի դիմացկուն է բորբոսանքի դեմ, քան ֆերմենտացիայի չյենթարկվածը կամ լրիվ չափով ֆերմենտացիայի չյենթարկվածը:

Ծխախոտի բերքի մշակման ժամանակ նրա մեխանիկական վնասվածքները քիչ տեղ չեն բռնում և պակաս կորստաբեր չեն, քան զանազան հիվանդություններն ու վնասատունները:

Վորոնք են ծխախոտի մեխանիկաբար վնասվելու պատճառները.—

Անփույթ վերաբերմունք դեպի ծխախոտի կապոցների տեղափոխութիւնը (շենքից շենք), անփույթ աշխատանքը տեսակավորման, փունջ և հակ կապելու ժամանակ, փոշին, կեղտը, փունջ և հակ կապելու և տեսակավորելու շենքում կողմնակի առարկաների գոյությունը և այլն:

Այս պատճառները դժվար չէ վերացնել, յեթե միայն ծխախոտի բերքի մշակման աշխատանքները խնամքով և հոգատարութեամբ կատարվեն բոլոր ծխախոտագործ կոլտնտեսականների կողմից:

Յերկրամասի բոլոր ծխախոտագործական կոլտնտեսութիւնները պետք է վճռական պայքար մղեն այն բոլոր պատճառների դեմ, վորոնք ծխախոտի կորուստ են առաջացնում և վատացնում են նրա վորակը:

Յուրաքանչյուր կոլտնտեսութիւնն պետք է իր ժամանակին և ամբողջովին ձեռնարկէ այն բոլորը միջոցառումները, վարոնք մենք բերել ենք այս գրքուկի յերկրորդ գլխում («պայքար 1932 թվի ծխախոտի բերքի կորուստների դեմ») և բացի այդ, այն միջոցները, վորոնց անհրաժեշտութիւնը կզգացվի աշխատանքի ընթացքում:

Ծխախոտի բերքի կորուստների վերացումը ծխախոտագործական կոլտնտեսութիւնների անելիքն է:

ՄԻԱԽՈՏԻ ՓՈԽԱԴՐՈՒՅՑՈՒՆԸ

Հենց վոր ծխախոտը հակ է կապվում և հավաքվում բավականաչափ քանակութեամբ, իսկույն պետք է փոխադրել և հանձնել մթերակայանին: Իսկ անհրաժեշտ է, վորովհետև կոլտնտեսութիւնը կարիք ունի վորքան կարելի յէ շուտ միջոցներ ստանալու, ծխախոտի հանձնման պլանը կատարելու, մյուս կողմից սոցիալիստական արդյունաբերութիւնը—ծխախոտի ֆաբրիկները հումուլթի յեն սպասում:

Անցյալ տարիներում արդյունաբերութիւնը հսկայական վնասներ կրեց, վորովհետև հումուլթի բացակայութեան պատճառով ֆաբրիկները կանգ էյին առնում: Յե՛վ այդ այն ժամանակ, յերբ յերկրամասի կոլտնտեսութիւններում կուտակված էր 1500—2000 տոնն հակ կապած ծխախոտ: Հաճախ ֆաբրիկներն ստիպված են ծխախոտը արտադրութեան հանձնել ուղղակի վազոններից: Այդ նույն պատճառով էլ մենք ընդհատումներ ունեցանք բնակչութեանը ծխախոտ մատակարարելու գործում:

Այս տարի վոչ մի դեպքում չպետք է թույլ տալ նման դրութիւն: Կոլտնտեսութիւնների ամբողջ ակտիվը պետք է աշխատի վորքան կարելի յէ կարճ ժամկետերում հակ կապել և հանձնել ծխախոտը, վորպեսզի նախ քան աշնանային անձրևներն ու ցիխը և հաղորդակցութեան դժվարանալը մեր ֆաբրիկներն ունենան հումուլթի բավականաչափ պաշար և աշխատեն անընդհատ: Հենց դրանով էլ վերջ կտրվի բնակչութեանը ծխախոտ մատակարարելու ընդհատումներին:

Բացի դրանից, չպետք է մոռանալ, վոր դեռ ևս վոչ բոլոր կոլտնտեսութիւնները համապատասխան շենքեր ունեն ծխախոտը պահելու համար և անհամապատասխան շենքերում պահելու շնորհիվ կարող են ծխախոտի վորակի խոշոր կորուստներ ունենալ:

Այս բոլորը միանգամայն համոզիչ կերպով ասում է այն, վոր անհրաժեշտ է շտապ կերպով մշակել ծխախոտի բերքը և հանձնել մթերակայաններին:

Պետք է խուսափել անձրևային յեղանակներին ծխախոտը սայլերով փոխադրելուց: Այդ կարելի յէ միայն ծայրահեղ դեպքերում, այն էլ այն պայմանով, յեթե սալերի վրա հակերը լավ տեղավորվեն և ծածկվեն բրեզնտով վորը բոլորովին ջուր չի անցկացնում: Այս նույն պայմանը պետք է կատարել անկախ յեղանակից, նաև ծխախոտը մեծ տարածութիւնների վրա փոխադրելիս:

Մայլերի վրա հակերը դարսելիս չի կարելի բեռը խիստ շատ բարձր անել (դարսել միայն յերկու շարք բարձրութեամբ), պետք է դարսել խնամքով և ամուր, մանավանդ այն դեպքում, յերբ ծխախոտը հեռու տեղ է ուղարկվում:

Ծխախոտը յերկաթուղիով փոխադրելիս չի կարելի թույլ տալ, վոր պահվի կայարաններում, իսկ ծխախոտը համբարանոցներում դարսելիս, հակերը պետք է ուղիղ և զգուշութեամբ զրվեն և անպայման պաշտպանվեն խոնավ յեղանակի ազդեցութիւնից: Հակերը պետք է դարսվին անպայման կանգնեցնելով և վոչ թե ձողերի վրա, վանդակի ձևով: Նույնը պետք անել նաև վազոններում դարսելու ժամանակ, վորտեղ նրանք պիտի լինեն իրար քիպ, թե չէ գնացօր շարժման ժամանակ նրանք կարող են թափվել և կորցնել իրենց ձևը: Բացի դրանից, պիտի դարսելը հնարավորութիւն է տալիս քիչ թվով վազոններ բանեցնել:

Ջրային ճանապարհով ավելի քան 2—3 ուր ծխախոտը փոխադրել կարելի յէ միայն համապատասխան կահավորման դեպքում:

Նավի վրա ծխախոտի տեղը պետք է չոր լինի և նա պետք է տեղավորվի մթերնայական բաժնից հեռու: Այդ բաժնի մոտիկ լինելը կարող է առաջ բերել ծխախոտի ֆերմենտացիա:

Վերջապես, մի հիմնական պայման ևս,— թե վազոններում և թե նավերի վրա ծխախոտի տեղերում չպիտի լինեն սուր հոտեր և ծխախոտի հետ միասին չպիտի տեղավորվեն ուրիշ ուժեղ հոտ ունեցող բեռեր:

Ընդհանրապես ծխախոտի փոխադրութիւնը պետք է հանձնարարվի միանգամայն փորձված և բարեհույս կոլտնտեսականների և նրանց վրա պատասխանատվութիւն պետք է դրվի ճանապարհին ծխախոտի փչացման ու հափշտակութեան համար:

ՀԱՍԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒՅՅՈՒՆՆԵՐ ԾԽԱԽՈՏԻ ՖԵՐՄԵՆՏԱՑԻԱՑԻ
ՄԱՍԻՆ

Ծխախոտը փունջ և հակ կապվելուց հետո յենթարկվում է այսպես կոչված՝ ֆերմենտացիայի:

Առանց ֆերմենտացիայի ծխախոտն անպետք է գործարանային վերամշակութայն համար:

Ֆերմենտացիայի չյենթարկված ծխախոտը չի ունենում լավ բուրմունք, լավ չի ծխվում և պահպանելիս հեշտ է բորբոսնում:

Ծխախոտի ֆերմենտացիայի համար հարկավոր են հատուկ պահեստներ, իսկ վորջին ժամանակներս—նաև գործարաններ և համապատասխան պայմաններ:

Ծխախոտի ֆերմենտացիան նրա բնական հատկությունն է և առանց նրան ծխախոտը չի կարող պահպանել իր վորակը:

Լավ և կանոնավոր ֆերմենտացիայի յենթարկված ծխախոտը, 2—3 տարի պահվելով նպաստավոր ու նորմալ պայմաններում, ավելի լավ հատկություն է ստանում:

Վորքան դանդաղ և առանց սաստիկ տաքանալու անցնի գլանակային՝ ծխախոտի ֆերմենտացիան, այնքան լավ կլինի նրա վորակը:

Մեզանում գլանակային ծխախոտերը ֆերմենտացիայի յեն յենթարկվում հատուկ ձևով դարսված և չկարված հակերում:

Ֆերմենտացիայի տմբողջ ընթացքը գլխավորապես նրանումն է կայանում, վոր խոնավություն և տաքություն աղբյուր ծխախոտի տերևների մեջ սկսում են ներգործել առանձին բաղադրություններ, այսպես կոչված՝ ֆերմենտներ: Իրա հետևանքով տերևի մեջ տեղի յե ունենում մի շարք բաղադրությունների վերածում ուրիշ բաղադրությունների, վորոնք ապահովում են ծխախոտի, վորպես ծխելու նյութի, լավ հատկությունը:

Ֆերմենտացիայի վերջում ծխախոտն իր սկզբնական կշռից կորցնում է 5—15⁰/₀, վորովհետև շարք գորրորջիանում է և մի շարք նյութեր գաղ են դառնում—չբանում են:

Ներկայումս գոյություն ունի յերկու տեսակ ֆերմենտացիա—սեզոնային և արտասեզոնային:

Ծխախոտի առաջին տեսակի ֆերմենտացիան սեզոնային է կոչվում, վորովհետև նա կատարվում է տարվա վորոշ տաք

ժամանակ, վորոշ սեզոնում, հատուկ պահեստներում և համապատասխան պայմաններում: Սեզոնային ֆերմենտացիայի տմբողջ պրոցեսը խոշոր չափով կախված է մթնոլորտային պայմաններից, վորոնք մենք չենք կարող անորինել մեր ուղածի պես, ուստի և ֆերմենտացիայի յենթարկվող ծխախոտի վորակը յենթակա յե ամեն տեսակ պատահականությունների:

Սեզոնային ֆերմենտացիայի պրոցեսը տևում է մեկ ու կես ամիս (մայիս—հունիս), իսկ աշնանից մթերված ծխախոտի հումուլթն այդ տմբողջ ժամանակվա ընթացքում պառկում—մնում է իբրև մեռած կապիտալ:

Վերջին տարիներս ծխախոտի հումուլթի պակասությունը ստիպում է արագացնել ֆերմենտացիայի ընթացքը: Այս խնդիրը լուծվել է նրանով, վոր գործնականում կիրառվում է արտասեզոնային ֆերմենտացիան (վորի մեթոդը մշակել է պրոֆեսսոր Սմիրնովը):

Արտասեզոնային ֆերմենտացիայի մեթոդի եյուլթյունը վորչնչով չի տարբերվում վերևում նկարագրած սեզոնային ֆերմենտացիայից:

Ինչպես առաջին, այնպես էլ յերկրորդ դեպքում պետք է նպաստավոր պայմաններ լինեն ծխախոտի տերևում գտնվող հատուկ նյութերի—ֆերմենտների աշխատանքի համար:

Սեզոնային և արտասեզոնային ֆերմենտացիայի մեթոդների տարբերությունը կայանում է սրանում, վոր յերկրորդ մեթոդը պահանջում է հատկապես կահավորված, այսպես կոչված՝ ֆերմենտացիայի գործարաններ կառուցել:

Այդ գործարաններում տարվա ամեն տեսակ յեղանակին հատուկ մեքենայական, ջերմատու կառուցվածքների միջոցով կարող են ստեղծվել այնպիսի պայմաններ, վորոնք միանգամայն նպաստավոր են ծխախոտի ֆերմենտացիան կատարելու համար:

Քանի վոր գրքիս սուղ եջերը չեն թույլ տալիս մեղ մանրամասն կանգ առնել արտասեզոնային ֆերմենտացիայի հարցերի վրա, ուստի նաև մատնանշենք, վոր գոյություն ունի արտասեզոնային ֆերմենտացիայի մի այլ մեթոդ, վորը մշակել է ընկ. Վ. Լակարբոյը: Այս մեթոդը մի վորքը տարբերվում է պրոֆ. Սմիրնովի մեթոդից:

Արտասեզոնային ֆերմենտացիայի ծխախոտերն իրենց վորակով պակաս չեն սովորական սեզոնային ֆերմենտացիայի ծխախոտերից, ընդհակառակը, նույնիսկ ավելի լավ վորակի յեն: Հենց արտասեզոնային ֆերմենտացիայի ընթացքն ավելի

յով ե լինում, վորովհետև կախված է արտաքին, միջուրդա-
յին պայմանների ազդեցությունից:

Ֆերմենտացիայի յենթարկված ծխախոտը գործնականում
հետևյալ նշաններն է ունենում.

1) Տերևի հյուսվածքը պիրկ է և առաձգական, ունի նոր-
մալ խոնավություն, իսկ ֆերմենտացիայի չյենթարկված ծխա-
խոտի տերևը շատ խոնավություն ունի և թոշնած է:

2) Տերևի մակերևութին ավելի հարթ է և ավելի փայլուն,
քան ֆերմենտացիայի չյենթարկված ծխախոտի տերևինը:

3) Կանաչավուն մասերը պղտոր են. կինամոնագուլյն յե-
րանգավորումներով, մինչդեռ ֆերմենտացիայի չյենթարկված
ծխախոտի տերևի կանաչավուն մասերն ավելի պայծառ են:

4) Բացակայում է խոտի բուրմուռները:

ԾԻԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՇՆԱՆ-ՁՄԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱ- ԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Բազմամյա փորձը ցույց է տալիս, վոր ազրոտեխնիկական
միջոցառումների իր ժամանակին կիրառումն ընդհանրապես
ապահովում է բարձր բերքն ու վորակավոր հումուլթը: Մաս-
նավորապես դա վերաբերում է և ծխախոտին:

Իր ժամանակին կատարվող աշխատանքը ազատում է աշ-
խատող ձեռներ և հնարավորություն է տալիս հետագա աշխա-
տանքն ևս պահանջված ժամկետերում կատարել:

Անցյալ, 1931 թվականին ծխախոտի ցածր բերքն այն
հետևանքն ունեցավ, վոր մեր յերկրամասում 6, 5—7 հազար
տոննով պակաս հումուլթ ստացվեց:

Փոխանակ մեկ հեկտարից ստանալու 9,5 ցենտներ ծխա-
խոտ, վոր նախատեսնված էր պլանով և միանգամայն հնարա-
վոր եր, ստացվեց ընդամենը 7 ցենտներ (մեկ հեկտարից):

Այդ հետևանք եր ազրոտեխնիկական կանոններով պահա-
նջվող միջոցառումները վոչ իր ժամանակին կիրառելուն, կամ
բոլորովին չկիրառելուն:

Մեր ասածից իր ամբողջ պարզությամբ բղխում է այն
յեզրակացությունը, վոր ծխախոտի բերքի մշակումը պետք է
սերտ ներդաշնակվի ծխախոտագործության այսպես կոչված՝
աշնան-ձմեռային աշխատանքների հետ:

Մոտավորապես հուլիսի 15-ից մինչև ապրիլի 1-ը կատա-
րվում են նախ բերքահավաքման, ապա բերքի մշակման աշ-
խատանքները:

Այդ ժամանակաշրջանի առաջին կեսում, այսինքն մինչև
դեկտեմբերի 1-ը համաձայն ազրոտեխնիկական պահանջների,
պետք է կատարվեն աշնան-ձմեռային հետևյալ աշխատանքնե-
րը, — անկարանի տեղի ընտրությունը, հողի աշնանային մշա-
կումը տնկարանում ու դաշտում, վորտեղ պիտի տնկվի ծխա-
խոտը, ջերմոցային խոնուրդի պատրաստությունը, փայտի,
նյութեղենի, ինվենտարի պատրաստությունը, ջրամատակա-
րարման կազմակերպումը և անտառամաքրումը:

Այս աշխատանքները նախապատրաստական են:

Վերոհիշյալ ժամանակամիջոցում սովորաբար կատարվում
են նաև հետևյալ աշխատանքները. — դաշտերի մաքրումը, հողի
գարնանային մշակումը տնկարանում և դաշտում, բոլոր գար-
նանային աշխատանքները անկարանում, մինչև սածիլները
խնամելու սկիզբը:

Մենք նպատակ չենք ունեցել այստեղ նկարագրելու, թե
ազրոտեխնիկական տեսակետից ինչպես պիտի կատարել աշ-
նան-ձմեռային աշխատանքները: Մենք այստեղ անհրաժեշտ ենք
համարում միայն շեշտել, վոր աշնան-ձմեռային աշխատանքները
ժամանակին չկատարելը գարնանը լարված դրություն է
ստեղծում, մասնավանդ այն դեպքում, յերբ գարունն ուշ է գալիս:

Այս դեպքում ծխախոտագործական կոլտնտեսությունն
ստիպված է չափազանց կարճ ժամանակամիջոցում՝ 10—12
որում կատարել բոլոր գարնանային աշխատանքները, ավար-
տել ծխախոտագործության աշնան-ձմեռային աշխատանքները,
ինչպես և մի ամբողջ շարք ուրիշ աշխատանքներ տնտեսու-
թյան մյուս ճյուղերում:

Այս դրությունը փոփոխություն է մտցնում առաջուց
կազմված պլանի մեջ, պայմաններ է ստեղծում բանվորական
ուլժը լծկանն ու ինվենտարը լրիվ չոգտագործելու, աշխատա-
նքի ցածր արտադրողականության, աշխատանքի վատ վորակի,
հետևապես ցածր բերք ստանալու համար:

Այդ բոլորը կարելի յե վերացնել միայն այն պայմանով,
յեթե իր ժամանակին կատարվեն բոլոր աշխատանքները, ինչ-
պես նախատեսնված է վաղորդ կազմված արտադրական պլա-
նում, պլան-կարգադրում և ազրոպլանում:

Այստեղից յերևում է, թե ինչ մեծ նշանակություն ունի
ծխախոտագործության բոլոր աշխատանքների իր ժամանակին
կատարումը, համաձայն վաղորդ կազմված պլանի:

Ծխախոտագործական կոլտնտեսությունները նորից և
նորից պիտի հիշեն, վոր աշխատանքների ժամանակին կատա-

ԾԽԱԽՈՏԱՄՇԱԿՄԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1) Տեսակավորման և հակ կապելու ժամանակ ծխախոտը չպիտի բռնենա ավելորդ խոնավություն, վորը վորոշվում է տերևների իրար կպչելով: Հարկավոր է թաց ծխախոտը նորից չորացնել և հասցնել նորմալ խոնավության: Նորմալ խոնավությունը վորոշվում է նրանով, վոր տերևներն իրար չեն կպչում և ձվելուց հետո սկսում են դանդաղ ուղղվել:

2) Առանձնապես անհրաժեշտ է հետևել, վոր տերևների պոչերն ու յերակները նույնպես չունենան ավելորդ խոնավություն:

3) Չափից դուրս խոնավ ծխախոտը չորացնելու համար շարանները կախվում են չոր, տաք շենքում և այնտեղ մնում են, մինչև վոր ծխախոտը հասնի նորմալ խոնավության:

4) Չպետք է տեսակավորել և հակ կապել չափից դուրս չոր ծխախոտը, վորովհետև նա կփչրվի և հակի մեջ տերևները կջարդվեն: Մշակելու համար խիստ ձեռնաու յե խոնավ յեղանակը, յերը ծխախոտը մեկ յերկու որվա ընթացքում կախված լինելով մարագներում, ընդունում է անհրաժեշտ խոնավությունը: Սակայն ավելի լավ է չըսպտել խոնավ յեղանակին, այլ կուտնտեսություններում ունենալ վաղորոք պատրաստված փոսեր, վորտեղ և հակ կապելուց մեկ որ առաջ տեղավորել ծխախոտը խոնավացնելու համար:

5) Ծխախոտի յուրաքանչյուր հակ պիտի լինի մի տեսակի ծխախոտից, իսկ տերևները հակերում, փնջերում և կապոցներում չպետք է մամլվեն:

6) Ծխախոտը տեսակավորելիս և հակ կապելիս անհրաժեշտ է հետևել մաքրության: Նորմալ խոնավությամբ ծխախոտի շարանները պետք է դիտվեն և ուլյալ տեսակին անհամապատասխան բոլոր տերևները պետք է ջնկվեն:

7) Շարանի վրայի տերևները փունջ են կապվում 18—25-ական հատ: Կապելուց առաջ ձեռքով պետք է հարգարել յուրաքանչյուր տերև: Կապել պետք է յեգիպտացորենի թերթերով:

8) Փունջերը հակ կապելուց առաջ դարսվում են 10—15 շարք, հակերի մեջ դրվում են 2 շարք, տերևների պոչերը — դեպի տարբեր կողմեր:

9) Բոլոր բորբոսնած փնջերը ջնկվում են, չորացվում և առանձին հակ կապվում: Հակի մեջ բոլոր փնջերն ու կապոցները պետք է դրվեն այնպես, վոր տերևների պոչերը լինեն դեպի դուրս, — հակի յերկար կողմերից:

10) Շարանները հակ կապելուց առաջ մանրամասն նայվում են և տեսակավորվում, իսկ նրանց վրայի տերևները մի փոքր սոսեցվում

բումը, ազդրոտեխնիկական կանոնների այդ հիմնական պահանջը գրավական է նրանց կազմակերպչական-տնտեսական ամրապնդման, կուտնտեսակոնների նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման, բարձր բերքի, ծխախոտի լավ վորակի և բերքն առանց կորստի հավաքելու:

Կատարելով այս բոլորը, լայնորեն կիրառելով աշխատանքի սոցիալիստական մեթոդները — սոցմրցումն ու հարվածայնությունը, ոգտագործելով գուղատնտեսական զիտության բոլոր նվաճումները և առաջավար կոեկտիվ ու խորհրդային տնտեսությունների փորձը, — Յերկրամասի ծխախոտագործական կուտնտեսությունները կկատարեն ծխախոտի վերաբերյալ իրենց առաջադրությունները, վորոնք այս տարի տրված են կուսակցության ու կառավարության կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

ԱՐՏԱԳՐՈՒՅՑԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՐՄԱՆԵՐՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԱՇԽՈՐԵՐՈՎ

Կատարվող աշխատանքները և նրանց պահանջները	Արտադրողի նորմա	Նորման կատարելու համար հարկավոր է					Աշխատանքի լուրջ կերպով կատարելու և կվալիֆիկացիայի միջին օրվա զմայտագրությունը	Միջին օրվա աշխատանքի արտադրությունը
		Ֆարշուտ	Ֆանակը	Աշխատողներ				
		Ֆարշուտ	Ֆանակը	աղ-մարդ	Կին	Անչափացու		
1) Փնջելը								
Նորորատերև ծխ.	205.	—	1	—	1	—	Ծանր 1,25	
Մանրատերև ծխ.	15 »	—	1	—	1	—	» » 1,25	
2) Տեսակավորումը	120 »	—	1	1	—	—	Վորակ 1,5	
3) Հակ կապելը	3 »	—	1	1	—	—	» » 1,5	
4) Թել կրելը	200թ	—	1	—	—	1	Միջին 1,0	
5) Հակ կապելը (շարաններից)	6 հ.	—	1	1	—	—	Վորակ 1,5	
6) Ֆրիչներ և գազելների մշակումն ըստ արդյունաբերական ստանդարտի	8 հ.	—	1	—	1	—	» » 1,5	

են իրար և սովյալ տեսակին անհամապատասխան բոլոր անպետք (փտած, բորբոսնած, հիվանդ) տերևները ջրով մաքրել: Ամբողջ շարանը բաժանվում է 4 հավասար մասերի, յուրաքանչյուր մասը 80—90 սանտիմետր յերկարությամբ: Շարանի վրայի տերևները կարգի յեն բերվում այնպես, վոր դարսելիս չկծկվեն: Շարանի կտրված մասերն արկղի յերկու կողմերից դրվում են տախտակի տակ, վորտեղից հակ կապողները (արկղի ամեն կողմից մեկ հողի) նրանց դարսում են արկղի մեջ, տերևների պոչերը դեպի դուրս, շարքը շարքի դիմաց, յուրաքանչյուր նախնթաց շարքը ծածկելով հակառակ կողմի շարքի վերին մասերով (տերևների վերին ծայրերով) մեկ յերորդի չափ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3-րդ

ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԻ ՄՇԱԿՄԱՆ ՎՈՐԱԿԱՅԻՆ ՅՈՒՅԱՆՆԵՐԸ, ՎՈՐՈՒՔ ՊԱՐՏԱԳԻՐ ԿԵՐՊՈՎ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐՎԵՆ

Կատարվող աշխատանքները	Աշխատանքների տեսակները	Հասանելիք աշխարհի իջեցման տոկոսները վորակային ցուցանիշները չկատարելու դեպքում	
		Վատ աշխատանքի համար	Շատ վատ աշխատանքի համար
Տեսակավորում	1) Տեսակավորել նորմալ խոնավությամբ ծխախոտ	7	10
	2) Տեսակավորել առանձին, ըստ տերևահատի և տեսակի	10	15
	3) Ջուրով հիվանդ, վարակված տերևները	8	10
	4) Փունջ կապելու շենքում մաքրություն պահել	—	—
Փունջ կապելը	1) Հարդարել տերևները	25	35
	2) Փնջի տերևների թիվն է 18—25, միևնույն չափով, միևնույն տերևահատի, տեսակի և դուրսի	4	6
	3) Վնասված, հիվանդ և այլ տերևները դարսել առանձին	12	16
Հակ կապելը	1) Վնասված, հիվանդ և այլ տերևները	9	13
	2) Հակ չկապել չափազանց խոնավ կամ չոր ծխախոտը	25	35
	3) Հակի բոլոր մասերը (փնջերը, կայլն) տեսակով, տերևահատով և դուրսով միանման պիտի լինի	6	8
	4) Հակի մեջ փնջերը չմամբել	10	14
	5) Հակը կապել վորոշված չափով, ըստանդարտի հանձնաճյճ	4	6
		5	7

ԾԽԱԽՈՏԻ ԲԵՐՔԻ ՄՇԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՂԵՆԻ ՅԵՎ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ

(100 հեկտար ծխախոտի ցանքի համար)

Նստարաններ տեսակավորողների համար	10 հատ
Թուղ	90 կգ
Հակ կապելու ձողեր	24,000—30,000 հատ
Նավթ	1000 կգ
Նավթի լամպեր (մեծ)	12 հատ
Հակ կապելու արկղներ	10 »
Պատվանդանի սրանց համար	10 »
Նստարաններ հակ կապողների համար	10 »
Արկղներ կապողների կեռերը դարսելու համար	5 »
Արկղներ թուղ դարսելու համար	5 »
Խսիրներ փունջ կապողների զոգնոցների համար	100 քառ. մետր
Տախտակներ հակում ծխախոտը նստեցնելու համար	15 հատ

(Յերկարությամբ ու լայնությամբ սրանք պիտի համապատասխան լինեն հակ կապելու արկղի չափին),

ՀԱՎԵԼՎԱԾ 5-րդ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ 1932 ԹՎԻՆ

Գյուղատնտեսական հարկի վերաբերյալ մենք ունենք հետևյալ արտոնությունները.

1) Հարկից բոլորովին ազատվում են ծխախոտի ամբողջ ցանքերը, վորոնք կատարվել են խոպան կամ յերկարատե հանգստի թողած հողի վրա:

2) Հարկից բոլորովին ազատվում են դեղին ծխախոտերի և մախորկայի նոր զցված պլանտացիաները:

Ծխախոտն ու մախորկան հարկվում են համապատասխան տարածությունները հացահատիկային կուլտուրաների յեկամտի համաձայն, այսինքն իրենց իսկական արժեքից պակաս:

ԾԽԱԽՈՏ ՅԵՎ ՄԱԽՈՐԿԱ ՄՇԱԿՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Միության Ժողովրդական Կոմիտեի Խորհրդի վորոշումը) 3 հուլիսի, 1932 թ. № 1039)

1) Ծխախոտ և մախորկա մշակող կուլտուրատնտեսությունների, կուլտուրատնտեսականների և անհատական չքավոր, միջակ տնտեսությունների համար սահմանել հետևյալ արտոնությունները.—

Պակասեցնել հացամթերու մանրի պլանն այն ծխախոտ և մախորկա մշակող կոլտնտեսություններին, կոլտնտեսականների և անհատական չքավոր—միջակ անտեսությունների համար, վորոնք լիովին կկատարեն կոնտրակտացիոն պայմանագրերով նախատեսված պարտավորությունները ծխախոտի ու մախորկայի տնկման, մշակման և սրանց հումուլյթը պետությանը հանձնելու վերաբերյալ, ազատելով հացամթերու մանրի կարգով հացը պետությանը հանձնելուց, — նրանց տնկած գեղին ու սիգարային ծխախոտերի յուրաքանչյուր մեկ հեկտարի համար—5 հեկտար հացահատիկային մշակույթների և մեկ հեկտար մախորկայի դիմաց—3 հեկտար հացահատիկային մշակույթների չափով:

Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի մթերման կոմիտեն և ԽՍՀՄ մատակարարման ժողկոմատը պետք է լիակատար չափով հաց մատակարարեն ծխախոտ և մախորկա մշակող անտեսություններին այն չափերով, վորոնք նախատեսված են կոնտրակտացիոն պայմանագրերով:

ԽՍՀ Միության ժողովրդական կոմիտեաների Խորհրդի նախագահ՝ Վ. Մորսով (Սկրյաբին)

ՄԻՍՍՍՏԻ ՅԵՎ ՄԱԽՈՐԿԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշխատանքի յեվ Պաշտպանության Խորհրդի վորոշումը

1) Պարզաբանել, վոր ԽՍՀՄ-ի ժողկոմխորհի 1932 թվականի հուլիսի 3-ի №1939 որենքով վորոշված արտոնությունները (հացը հանձնելու մասին) տարածվում են ծխախոտ և մախորկա մշակող բոլոր անտեսությունների վրա (կոլտնտեսություններ, կոլտնտեսականներ և չքավոր—միջակ անտեսություններ), վորոնք կհանձնեն ծխախոտի արտադրանքն ըստ բերքատվության նորմաների, վորոնք նախատեսված են ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի 1932 թվականի հունվարի 16-ի №32 վորոշմամբ փաստորեն տնկված (ցանված) տարածության մասին, համաձայն չափերու տվյալներին:

2) Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի № 829 վորոշմամբ սահմանված արտոնություններն Արխաղիայի վերաբերյալ (նրա ծխախոտի արտադրանքի 5 տոկոսի իրացման մասին) տարածել ծխախոտ և մախորկա մշակող բոլոր անտեսությունների վրա, վորոնք իր ժամանակին կմշակեն և պետությանը կհանձնեն արտադրանքը, — յերակետ ունենալով չափերու տվյալներին համապատասխան ցանքերի փաստական տարածությունը և բերքատվությունը, վոր սահմանված է ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի և Մատակարարման ժողկոմատի կողմից:

Սեփական արտադրանքի հիշյալ 5 տոկոսի իրացման իրավունքը տրվում է միայն նրանից հետո, յերբ տվյալ անտեսություններն ամ-

թուղովին կկատարեն ծխախոտի և մախորկայի հումուլյթը պետությանը հանձնելու վերաբերյալ նրանց տրված պլանները:

3) Պարտավորեցնել ԽՍՀՄ-ի մատակարարման ժողկոմատին մշակել հրահանգ, վորով սահմանվում է ծխախոտի հումուլյթի ավելցուկները վաճառելու կարգը, — տվյալ անտեսության կողմից իր հանձնման պարտավորությունները կատարելու մասին հատուկ փաստաթղթի տվածայն:

Առխաթանքի յեվ Պաշտպանության Խորհրդի նախագահի սեղակալ՝ Վ. Կուրյուխով




Ներածություն	1
Ծխախոտի բերքի մշակման նախապատրաստությունը	3
ա) Կաղմակերպչական միջոցառումներ	3
բ) Չորացրած ծխախոտի շարանների ու կապոցների հաշվառը	6
գ) Ծխախոտի կապոցների պահպանությունը	8
դ) Միջոցառումներ ծխախոտը հրդեհից պաշտպանելու համար	9
Ծխախոտի մշակումը նրա բերքամալաքից հետո	10
Արտահանման ստանդարտ	13
ա) Ծխախոտի տեսակները (Մամսոն)	
բ) Թրիկիլուլակ և կուբանյան Տրոպիկոն ծխախոտի տեսակները	14
գ) Մոլդափյա Տրոպիկոն—պլատանա ծխախոտի տեսակները	16
Արդյունաբերական ստանդարտ	
Ծխախոտի տեսակները	18
Ծխախոտի մշակման աշխատանքները	20
Հակ կապելն ըստ արտահանման ստանդարտի	23
Հակ կապելն ըստ արդյունաբերական ստանդարտի	25
Աշխատանքի կաղմակերպումն և ուլմերի գասավորությունը ծխախոտի բերքի մշակման ժամանակ	26
Ծխախոտի հակերի պահպանումը	31
Ծխախոտի վնասատուները, հիվանդությունները, դանաղան մեխանիկական վնասվածքներն և նրանց դեմ կապելու միջոցները	32
Ծխախոտի փոխադրությունը	36
Համառոտ տեղեկություններ ծխախոտի ֆերմենտացիայի մասին	38
Ծխախոտագործության աշխատանքները—ձմեռային աշխատանքների նախապատրաստությունն և կատարումը	40
Հավելված 1-ին	
Արտադրույթի որինակելի նորմաներն և նրանց զննատույնն աշխորհրով	42
Հավելված 2-րդ	
Ծխախոտի մշակման ազրոտեխնիկական կանոնները	43
Հավելված 3-րդ	
Ծխախոտի բերքի մշակման վորակային ցուցանիշները, վորոնք պարտադիր կերպով պիտի կատարվեն	44
Հավելված 4-րդ	
Ծխախոտի բերքի մշակման ժամանակ անհրաժեշտ նյութեղենի և ինվենտարի համառոտ ցանկ	45
Հավելված 5-րդ	
Աշտանություններ ծխախոտագործությանը 1932 թվին	46



ԲԵ.—45

Отв. редактор
А. Г. Лвакьян
Техн. редактор
Г. М. Маркьян

Сдано в наб. 16 X 1932 г.
Сдано в печ. 14 XI 1932 г.
Об'ем 3 печ. листа
Тираж 2000 экз.



19.379

ԳԻՆԸ 45 ՀՈՊ
цена 45 коп

900
45680

2
1
BIBLIOTEKA
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



На армянском языке

Кругляков, Селеспериди, Мишаев
Послеурожайная обработка
табака

И. во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԳՈՒԵՄՈՒԹՅՈՒՆ

000504-902 011404802 002. 53
ԳՐԱԿՆԵՐՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԼ